ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

«ԱԳԱԹ»
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Հետազոտություն-զեկույց

Ծրագրային և հետազոտական թիմ

Զեկույցը պատրաստեց Արևիկ Հաբարձյումյանը

Ծրագրի ղեկավար՝ Ռոզա Ավագյան

Ծրագրի համակարգող՝ Մարինե Ավետիսյան

Ծրագրի հաշմանդամության ոլորտի փորձագետ-խորհրդատու՝ Կարինե Գրիգորյան

Ծրագրի իրավաբան-խորհրդատու՝ Լուիզա Վարդանյան

Ֆոկուս խմբային քննարկումների հարցազրուցավար՝ Գայանե Գրիգորյան

Հանրային կապերի պատասխանատու, սրբագիր՝ Անուշ Հարությունյան

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

«ԱԳԱԹ»
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Սույն զեկույցը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հաշմանդամությունը և ՀՀ օրենսդրությունը» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Բովանդակություն

Երախտիքի խոսք 3
Ներածություն 4
Իրականացված հետազոտության խնդիրները 5
Արդյունքներ 5
Մեթոդաբանություն 5
Մեթոդներ 6
Կիրառված սանդղակները և չափման ինդեքսները 7
Հաշմանդամություն 7
Ընտանեկան բռնություն 7
Բռնության տիպաբանություն 7
Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ ընտանեկան բռնություն 9
Բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների և մեկ ապաստարանի ներառականության եվ մատչելիության գնահատում 20
Պետական մարմինների տրամադրած տեղեկատվություն 26
Եզրակացություն 29
Առաջարկություններ 31
Առաջարկություններ պետական մարմիններին 31
Առաջարկություններ ապաստարաններին և աջակցության կենտրոններին 32
Առաջարկություններ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում գործող հասարակական կազմակերպություններին 32
Առաջարկություններ զանգվածային լրատվության միջոցներին 33

Երախտիքի խոսք

Հետազոտական ծրագիրը հնարավոր դարձավ մեծ թվով մասնակիցների, հետազոտական խմբի, նախաձեռնող «Ագաթ» ՀԿ-ի, դոնոր և ֆինանսավորող կազմակերպությունների և տարբեր համագործակից կառույցների, կազմակերպությունների և կամավորների շնորհիվ:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, հատկապես՝ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանին, Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ Գեղանուշ Գյունաշյանին և վարչության առաջատար մասնագետ Սոֆի Բոստանջյանին, ՀՀ ոստիկանությանը, Հայաստանում գործող գործընկեր կենտրոններին և ՀԿ-ներին՝ Գյումրու զբաղվածության տարածքային կենտրոն, «Աստղացոլք», «Էմիլի Արեգակ», «Հույսի Մեծամոր», Իջևան քաղաքի «Հույսի կամուրջ», «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ», Երևանի Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» Միություն, «Մալիշկայի երիտասարդների միություն», «Սատար», «Սպիտակ բազե», «Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության» կոալիցիային, Սպիտակի խնամքի տանը, ինչպես նաև անհատներ Վարդուհի Արամյանին, Սիփան Ասատրյանին, Ռուզաննա Սարգսյանին՝ մեր հետազոտական աշխատանքները իրականություն դարձնելու համար:

Շատ կարևոր և գնահատելի են «Հաշմանդամությունը և ՀՀ օրենսդրությունը» ծրագրային թիմի, մասնավորապես ծրագրի ղեկավար Ռոզա Ավագյանի, համակարգող Մարինե Ավետիսյանի, հաշամանդամային ոլորտի փորձագետ Կարինե Գրիգորյանի, սոցիոլոգ Արևիկ Համբարձումյանի, իրավաբան Լուիզա Վարդանյանի, հարցազրուցավար Գայանե Գրիգորյանի, հանրային կապերի պատասխանատու և սղագիր Անուշ Հարությունյանի նվիրումը ծրագրին և աջակցությունը հետազոտական գործընթացներին: Ծրագրային թիմը հատուկ շնորհակալություն է հայտնում հաշմանդամություն ունեցող անձանց, ովքեր մասնակցել են ֆոկուս խմբային քննարկումներին, հարցազրույցներին և տրամադրել են անհրաժեշտ տեղեկատվությունը:

Եվ, իհարկե, մեր նախաձեռնությունը իրականություն չէր դառնա առանց ֆինանսավորող և դոնոր կառույցների աջակցության: Շնորհակալություն ենք հայտնում Եվրոպական միությանը և «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը:

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունում, համաձայն պաշտոնական տվյալների, հաշմանդամություն ունեցող անձանց թիվը 2019 թվականի հունվարի դրությամբ կազմում է շուրջ 192.000 մարդ:

Վերջին տարիներին ընտանեկան բռնության տարածվածությունը և դրա ծանր հետևանքներն ավելի և ավելի մտահոգիչ են դառնում: Հայաստանում տարեկան գրանցվում է ընտանեկան բռնության 2000 դեպք, որոնց թիվն անընդհատ մեծանում է: Հաշմանդամություն ունեցող անձինք ավելի խոցելի խմբում են: Նրանք բախվում են խտրականության բազմաթիվ տեսակների, ներառյալ սեռով և հաշմանդամությամբ պայմանավորված խտրականության, ինչը նրանց դարձնում է ավելի մեկուսացված և խոցելի բռնության նկատմամբ:

«Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպությունը Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում իրականացրեց «Հաշմանդամությունը և ՀՀ օրենսդրությունը» ծրագիրը (01.01-06.31.2019թ.): Ծրագրի նպատակն է նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության բացառմանն ու ընտանիքում բռնության կանխարգելմանը: Հիմնական թիրախ են հանդիսանում «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի և հարակից օրենսդրության բարելավումը և ներառականության ապահովումը՝ գենդերային խտրականության, տարբերակման և հաշմանդամության տեսանկյունից:

Նշված նպատակների իրագործման համար իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն հարցաթերթիկային հարցման, ֆոկուս-խմբային քննարկումների, մոնիտորինգի, և օրենսդրական կարգավորումների բովանդակային վերլուծության մեթոդների կիրառմամբ: Ուսումնասիրություն է իրականացվել ՀՀ 8 մարզերում՝ Շիրակի մարզ՝ ք. Գյումրի, Լոռու մարզ՝ ք. Վանաձոր, ք. Սպիտակ, Գեղարքունիքի մարզ՝ ք. Ճամբարակ, Արմավիրի մարզ՝ ք. Մեծամոր, Տավուշի մարզ՝ ք. Իջևան, Վայոց ձորի մարզ գ. Մալիշկա և ք. Երևան: Իրականացվել են 11 ֆոկուս խմբային քննարկումներ, որոնց ընդհանուր թվով մասնակցել է հաշմանդամություն ունեցող 153 անձ: Իրականացվել է հարցաթերթիկային հարցում ՀՀ-ում բնակվող հաշմանդամություն ունեցող 100 անձանց շրջանում (առցանց և դեմառդեմ):

Անցկացվել է 7 մոնիտորինգ-գնահատում ՀՀ-ում գործող մեկ ապաստարանում և բռնության ենթարկված անձանց ծառայություններ մատուցող հաստատություններում՝ «Կանանց աջակցման կենտրոն/ապաստարան» ՀԿ-ում, «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում, «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալ հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ում, Նուբարաշենի «Երեխայի և ընտանքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում, «Սյունիքի մարզի երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամ»-ում, «Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում, «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ում:

Մոնիտորինգի ընթացքում հարցումներ են իրականացվել ՀՀ պետական մարմիններին՝ պարզելու համար «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եվ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի կիրառման առանձնահատկությունները և մատչելիությունը հաշմանդամության տեսանկյունից:

Այսպիսով, ծրագրի շրջանակներում իրականացվել է համապարփակ ուսումնասիրություն, որի նպատակն է՝ բացահայտել հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ բռնության դրսևորումները տանը կամ ընտանիքում, բռնության կանխարգելման և հետևանքների հաղթահարման համատեքստում:

Իրականացված հետազոտության խնդիրները

- Բացահայտել հաշմանդամություն ունեցող անձանց պատկերացումները ընտանեկան բռնության վերաբերյալ:
- Բացահայտել տանը կամ ընտանիքում հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ բռնության դրսևորումների հաճախականությունը:
- Բացահայտել բռնության ենթարկված անձանց տրվող աջակցության կենտրոնների և ապաստարանների ներառականությունը և մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար:
- Բովանդակային վերլուծության ենթարկել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքը և հարակից օրենսդրությունը հաշմանդամություն ունեցող անձանց ներառականության տեսանկյունից:
- Հետազոտության եզրահանգումների հիման վրա ստեղծել ընտանեկան բռնության կանխարգելման մեխանիզմների բարելավմանն ուղղված առաջարկների փաթեթ:

Արդյունքներ

- Տանը կամ ընտանիքում հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ բռնության դրսևորումների վերաբերյալ համապարփակ ուսումնասիրություն:
- Ապաստարանների և աջակցության կենտրոնների ներառականության վերաբերյալ համապարփակ ուսումնասիրություն:
- Հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ ընտանեկան բռնության դրսևորումների ուսումնասիրման և չափման փորձարկված մեթոդաբանություն և գործիքներ:
- Առաջարկների փաթեթ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում ընտանեկան բռնության կանխարգելման մեխանիզմների (պատասխանատու կառույցների, ՀԿ ոլորտի, օրենսդրական կարգավորումների) բարելավմանը:

Մեթոդաբանություն

Իրականացված ուսումնասիրության շրջանակներում առաջադրվել են հետևյալ հետազոտական հարցերը

- Բացահայտել հաշմանդամություն ունեցող կանանց բռնության ընկալումները ըստ հետևյալ գործոնների
  - բռնության սահմանումները և ընկալումները (ի՞նչն են համարում բռնություն),
  - բռնության տեսակների իմացությունը (ֆիզիկական, տնտեսական, հոգեբանական, սեռական, անտեսում)
- Բացահայտել պատկերացումները ընտանեկան բռնության մասին ըստ հետևյալ գործոնների՝
  - բռնության պատճառները
  - բռնություն գործադրած անձի առանձնահատկությունները (սեռը, կարգավիճակը ընտանիքում, կրթությունը և այլն)
  - բռնության տեսակը
  - բռնության կիրառման հաճախականությունը
  - բռնության ենթարկված անձի վարքը բռնության իրավիճակներում
- Բացահայտել բռնության տարբեր դրսևորումների հաճախականությունը հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում

- Դուրս բերել բռնության հանդեպ խոցելիության ինդեքս՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների
- Բացահայտել հաշմանդամություն ունեցող կանանց վարքի ռազմավարությունները բռնության ենթարկվելու պարագայում
  - Ի՞նչ ծառայություններ կամ կառույցներ գիտեն, որոնց կարող են դիմել բռնության ենթարկվելու դեպքում
  - Վստահությունը այդ կառույցների, ծառայությունների և անձանց հանդեպ
  - Բավարարվածությունը այդ կառույցներից, ծառայություններից կամ անձանցից
- Պարզել բռնության հանդեպ առավել խոցելի խմբերին ըստ հետևյալ չափանիշների՝
  - Հաշմանդամության տեսակ
  - Հաշմանդամության խումբ
  - Տարիք
  - Սեռ
  - Կրթություն
  - Բնակավայրի տեսակ
  - Մարզ
  - Ամուսնական կարգավիճակ
  - Աշխատանք/եկամուտ
- Պարզել բռնության ենթարկված անձանց մատուցվող աջակցության կենտրոնների և ապաստարանների ներառականությունը և մատչելիությունը
- Պարզել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի ներառականությունը բովանդակային վերլուծության միջոցով

Մեթոդներ

Հետազոտական խնդիրները բացահայտելու նպատակով կիրառվել են ֆոկուս-խմբային քննարկումների, առցանց հարցման, մոնիտորինգային գնահատման և փաստաթղթերի բովանդակային վերլուծության մեթոդները:

- **Ֆոկուս-խմբային քննարկումների մեթոդը** հետազոտությունը դարձրեց առավել մասնակցային: Հետազոտական խումբը հնարավորություն ունեցավ մասնակիցներից ստանալ հետադարձ կապ, խորացնել տեղեկատվությունը: Այս մեթոդը հնարավորություն է տալիս բարձրացնել հասարակության առավել խոցելի շերտերի ձայնը, տալով նրանց խոսելու և լսված լինելու հնարավորություն:

Ֆոկուս-խմբային քննարկումների ձևավորման չափանիշը մարզն է: Քննարկումներն անցկացվել են ՀՀ 8 մարզերում:

Ֆոկուս խմբային քննարկումների ֆասիլիտացիան իրականացվել է մասնակցային, ինտերակտիվ, խաղային, և աուդիովիզուալ տեխնիկաների կիրառմամբ: Կկիրառվել են հետևյալ տեխնիկաները.

- **Ուղեղների գրոհ:** Այս մեթոդը թույլ տվեց բացահայտել բռնության վերաբերյալ պատկերացումները:
- **Բռնության վերաբերյալ սոցիալական հոլովակների ցուցադրություն:** Այս մեթոդը թույլ տվեց բացահայտել, թե բռնության ո՞ր տեսակներն են ընկալվում որպես բռնություն, իսկ որոնք՝ ոչ:
- **Փոքրիկ թղթերով աշխատանք:** Կարծիքի վրա չներազդելու նպատակով, կիրառվել է փոքրիկ թղթերի վրա պատասխանը գրելու մեթոդը, այնուհետև հնարավորություն է տրվել նաև մեկնաբանել սեփական տեսակետը:
- **Պրոյեկտիվ տեխնիկաներ:** Ընտանեկան բռնության վերաբերյալ առավել զգայուն հարցերը ձևակերպվել են պրոյեկտիվ ձևով (այս դեպքում հարցերը ձևակերպված

են ոչ թե անձամբ հարցվողի վերաբերյալ, այլ հարցվողի շրջապատի, կամ առհասարակ երևույթի): Սա թույլ տվեց ստանալ առավել անկաշկանդ և անկեղծ պատասխաններ:

- **Դեպքի նկարագրություն:** Մասնակիցներին հանձնարարվեց պատմել ընտանեկան բռնության սցենար, որին իրենք ականատես են եղել, կամ լսել են: Սա թույլ տվեց ստանալ ընտանեկան բռնության ամբողջական պատկեր:

Առցանց հարցման մեթոդը թույլ է տալիս ստանալ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ բռնության կիրառման վերաբերյալ վիճակագրական տվյալներ, մասնավորապես՝ բռնության ընկալումների վերաբերյալ վիճակագրություն, բռնության տարբեր դրսևորումների հաճախականության ինդեքսների դուրսբերում, ինչպես նաև բազմաչափ վերլուծություններ՝ սոցիալ-ժողովրդագրական տվյալների համադրությամբ: Հարցաթերթի լրացումը իրականացվել է առցանց և դեմառդեմ: Հարցաթերթը ներկայացված է հավելված 2-ում:

Կիրառված սանդղակները և չափման ինդեքսները

1-4 բալային հաճախականության սանդղակ, որտեղ 1-ը նշանակաում է երբեք, 2-ը՝ երբեմն, 3-ը՝ հաճախ, 4-ը՝ միշտ:

1-5 բալային գնահատման սանդղակ, որտեղ 1-ը նշանակում է շատ ցածր, իսկ 5-ը շատ բարձր:

Միջինացված ինդեքսը պատասխանի տարբերակների միջին թվաբանականն է: Հաճախականության սանդղակի դեպքում, որքան թվաբանական միջինը բարձր է, այնքան բռնությունը հաճախ է տեղի ունենում: Օրինակ, եթե հոգեբանական բռնության հաճախականության ինդեքսը 2,5 է, իսկ տնտեսական բռնության հաճախականության ինդեքսը 3,2, նշանակում է, որ տնտեսական բռնությունը ավելի հաճախէ տեղի ունենում, քան հոգեբանականը:

Միավորված կամ ընդհանրացված միջինացված ինդեքս մի քանի կատեգորիաների թվաբանական միջինների միջինն է: Օրինակ, բռնության մի քանի դրսևորումների (միավորված ըստ բռնության տեսակների) միջինների թվաբանական միջինը:

Հաշմանդամություն

Երկարաժամկետ ֆիզիկական, հոգեկան, մտավոր և զգայական դժվարություններ ունեցող անձանց և միջավայրային արգելքների փոխազդեցության հետևանք, որը կարող է խոչընդոտել նրանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով հասարակական կյանքին լիարժեք ու արդյունավետ մասնակցությանը:

Ընտանեկան բռնություն

Ընտանիքում բռնություն է համարվում «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով սահմանված ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքը, ինչպես նաև անտեսումը, որը կատարվել է ընտանիքի անդամների միջև:

Բռնության տիպաբանություն

Ծրագրի վերջնանպատակ սահմանելով ընտանեկան բռնության կանխարգելման օրենքի բարելավումը և ավելի ներառական դարձնելը, հետազոտության շրջանակներում բռնությունը սահմանվել և տիպաբանվել է հենց ՀՀ օրենսդրության, մասնավորապես ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին օրենքի

շրջանակներում[1]:

Համաձայն վերը նշված օրենքի հոդված 3-ի՝ ընտանիքում բռնություն է համարվում սույն օրենքով սահմանված ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքը, ինչպես նաև անտեսումը, որը կատարվել է ընտանիքի անդամների միջև:

Օրենքում առանձնացված են բռնության հետևյալ տեսակները.

- ֆիզիկական բռնություն՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ծեծը և այլ բռնի գործողությունները, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, կամ ուժեղ ցավ պատճառելը.
- սեռական բռնություն՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները.
- հոգեբանական բռնություն՝ դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը, դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ ընտանիքի անդամի անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին, արժանապատվության պարբերական նվաստացումը, սոցիալական ծայրահեղ մեկուսացումը, հղիության արհեստական ընդհատման հարկադրանքը.
- տնտեսական բռնություն՝ անձին հարկադրված նյութական կախվածություն ստեղծելու կամ իշխելու նպատակով նրան գոյության անհրաժեշտ միջոցներից (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք) զրկելը, սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը.
- անտեսում՝ ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն), իսկ չափահաս աշխատունակ զավակների կողմից իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում) դիտավորությամբ չբավարարելը, եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչը կամ չափահաս աշխատունակ զավակները տիրապետում են պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են:

Սակայն, ստացված տեղեկատվությունը խորացնելու և ավելի համապարփակ պատկեր ստանալու նպատակով, բռնության տիպերի և դրսևորումների սահմանման ժամանակ ուսումնասիրվել են նաև այլ մոտեցումներ:

Օրինակ՝ Հյուսիսային Ալաբամայի համալսարանի կողմից հրապարակված հոդվածում[2], որպես բռնություն բառի հոմանիշ գործածվում է «չարաշահում» բառը: Այս դեպքում, առաջարկվում է նաև բռնության սոցիալական տիպը, որը ՀՀ օրենսդրության դեպքում ներառված է հոգեբանական բռնության տիպի մեջ: Սակայն, կարծում ենք, որ առնվազն վերլուծական նպատակներով կարիք կա առանձնացնել այս 2 տիպերը կամ գոնե առանձնացնել սոցիալական բռնության ենթատիպ հոգեբանականի ներքո, քանի որ հոգեբանական բռնությունը վերաբերում է անձի ներանձնային ապրումներին, իսկ սոցիալական բռնությունը՝ անձի և հասարակության փոխհարաբերություններին:

1Հայաստանի Հանրապետության օրենքը ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 13-ին: «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքը կանոնակարգում է ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության կազմակերպահիրավական հիմքերը, սահմանում է ընտանիքում բռնության հասկացությունը, ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում իրավասու մարմինների լիազորությունները, պաշտպանության միջոցների տեսակները, դրանց կիրառման հիմքերը, ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշտեցման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց վերաբերյալ տեղեկությունների իրավական պաշտպանության առանձնահատկությունները:

2https://www.una.edu/manesafety/Domestic%20Violence/manifest.pdf

Սոցիալական բռնության տիպը կարևոր է առանձին դիտարկել, դրան վերագրելով՝ անձի սոցիալականացման խոչընդոտումը, կյանքի վերաբերյալ որոշումների վերահսկումը, սոցիալական կապիտալ ձևավորելու և զարգացնելու խոչընդոտումը, սոցիալական կապերի վերահսկումը, ինքնահիրացվելուն խոչընդոտումը և այլն:

Այսպիսով, ստեղծվել է բռնության չափման 26 կետից բաղկացած ինդեքս:

Ֆիզիկական	Տնտեսական	Սեռական	Հոգեբանական	Անտեսում
Քաշքշելը, հրելը, ապտակելը	Գումարից զրկելը, վերահսկելը, տնօրինելը (հաշմանդամության համար պետության կողմից տրվող գումարը, աշխատավարձը կամ այլ գումար)	Կամքին հակառակ կամ անօգնական վիճակն օգտագործելով կամ սպառնալով սեռական օրգաններին ձեռք տալը,մարմնի այլ մասերին դիպչելը, ստիպողաբար այլ մարդու մարմնի մասերին դիպչելը, սեռական հարաբերություններ ունենալը	Ծաղրական կատակները	Հատուկ կարիքները անտեսելը
			Ամոթանք տալը, մեղադրանքները	
			Ավելորդության զգացում առաջացնելը	
			Ինքնագնահատականը, ինքնավստահությունը նվազեցնող խոսքերը (դու դա չես կարող, դա քո ուժերից վեր է և այլն)	
Որևէ բութ առարկայով հարվածելը (գոտիով, կոշիկով և այլն)	Աշխատելը կամ սովորելը արգելելը		Արհամարհանքը (կարևորություն չտալը, անուշադրության մատնելը)	
			Կամքին հակառակ սեռական հարաբերություն ունենալու, սեռական օրգաններին ձեռք տալու, ստիպողաբար այլ մարդու սեռական օրգաններին ձեռք տալու սպառնալիքը	
			Ծեծելու սպառնալիքը	
Ծակող-կտրող գործիքով հարվածելը (դանակով կամ զենքով)	Հագուստից զրկելը		Գումարից զրկելու սպառնալիքը	
			Աշխատել կամ սովորել արգելելու սպառնալիքը	
			Հեռախոսից, համակարգչից, կապի այլ միջոցներից զրկելու սպառնալիքը	
			Տնից դուրս անելու և/կամ հատուկ փակ հաստատությունում տեղավորելու սպառնալիքը	
			Սոցիալ հոգեբանական	
			Ընկերների, ծանոթների, այլ մարդկանց հետ շփումների վերահսկումը, սահմանափակումը	
Ստիպողաբար հանգստացնող դեղորայք օգտագործելը	Բուժման և վերականգնողական հնարավորություններից, դեղորայքից, աջակցող տեխնոլոգիաներից զրկելը		Ընտանիքով հյուր կամ որևէ այլ վայր գնալուց տանը թողնելը	
Տեղաշարժերի՝ որևէ տեղ գնալու վերահսկումը, սահմանափակում			Անձնական կյանքի վերաբերյալ որոշումների վերահսկումը (զուգընկեր ունենալ, ամուսնանալ, երեխա ունենալ և այլն)	

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

Բռնության դրսևորումների ճանաչելիությունը

Ընտանեկան բռնությունը կարող է ունենալ բազմաթիվ պատճառներ՝ սկսած սոցիալական և իրավական ինստիտուտների աշխատանքի անկատարությունից, վերջացրած սեփական իրավունքների վերաբերյալ իրազեկվածության պակասով: Հիմքում ունենալով հաշմանդամություն ունեցող անձանց հետագա իրազեկվածության բարձրացման հեռանկարը և նրանց հզորացումը՝ մեր հետազոտության թիրախային կետերից մեկը բռնության տարբեր դրսևորումների ճանաչելիությունը բացահայտելն է: Այդ նպատակով, հետազոտության մասնակիցները ոչ միայն գնահատել են առանձնացված 26 դրսևորումների տեղի ունենալու հաճախականությունը իրենց հետ տանը կամ ընտանիքում, այլև պատասխանել են, թե նույն կետերը համարու՞մ են բռնություն, թե՞ ոչ:

Բռնության 26 դրսևորումների ճանաչելիությունը: Պատասխանները ներկայացված են ըստ «ոչ» տարբերակի նվազման:

Ասացե՛ք, խնդրեմ, նկարագրված իրավիճակներից յուրաքանչյուրը ըստ Ձեզ բռնությու՞ն է, թե՞ ոչ: 1. Այո, 2. Ոչ, 98. հրաժարվում եմ պատասխանել, 99. դժվարանում եմ պատասխանել



Գծապատկերից պարզ է դառնում, որ հետազոտության մասնակիցները առավել հաճախ բռնություն չեն համարում հենց հոգեբանական ճնշումները, անտեսումը և սոցիալականացմանը խոչընդոտող վերաբերմունքը (20-25%-ը այդ դրսևորումները չի համարում բռնություն):

«Ես գյուղից եմ և չեմ կարողանում տրանսպորտից օգտվել առանց կողմնակի օգնության: Մայրս անհանգստանում է ինձ համար և նրա կողմից գերխնամքի արդյունքում իմ ազատությունն է սահմանափակվում, մյուս կողմից էլ հասկանում եմ մորս անհանգստությունը: Ես կուզենայի ավելի ազատ լինել, որ հասկանայի՝ այս կամ այն բանը կարո՞ղ եմ անել, թե՞ չեմ կարող»

Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող 23-ամյա կին

«Ինձ չէին թողում ինչ-որ բան անել, մայրիկս ասում էր, որ չեմ կարող, խղճում էր, չէր ուզում, որ ես չհոգնեմ: Ես պնդեցի, որ ուզում եմ աշխատել: Հիմա ծաղիկներ եմ աճեցնում ու վաճառում: Մայրիկս էլ հասկացավ, որ ես կարող եմ, ու պետք չէ ինձ արգելել աշխատել»:

Մտավոր խնդիր ունեցող 25-ամյա աղջիկ

Չնայած բռնության նման դրսևորումները ամենաքիչ ճանաչելիությունն ունեն հարցվածների շրջանում, այնուամենայնիվ, ֆոկուս-խմբային քննարկումների արդյունքները փաստում են, որ պրոակտիվությանը խոչընդոտող, մոտիվացիան և ինքնագնահատականը նվազեցնող, սոցիալականացմանը խոչընդոտող բռնության դրսևորումները մեծ խնդիր են հաշմանդամություն ունեցող անձանց ներառման և ինքնակայացման ճանապարհին:

Պետք է նշել, որ երբեմն նույնիսկ ծեծը չեն համարում բռնություն.

«Ես մեր ընտանիքում բռնության չեմ ենթարկվում, այդպիսի բան չկա: Ծեծ եղել է մայրիկիս կողմից, բայց ես դա բռնություն չեմ համարում, ավելի շատ դաստիարակչական մեթոդ, որովհետև որոշակի անհանդուրժողականություն նաև իմ կողմից կա և կարող է այնպես ստացվել, որ ես էլ պահի տակ պատասխանեմ մայրիկիս, բայց իմ ցանկությունների մեջ ես ազատ եմ և բռնության չեմ ենթարկվում»:

Մտավոր զարգացման խնդիր ունեցող 22-ամյա աղջիկ

Բռնության դրսևորումների ճանաչելիությունը ըստ «Դժվարանում եմ պատասխանել տարբերակի», նվազման կարգով:

Գծապատկերից պարզ է դառնում, որ բռնությունը դեռևս շարունակվում է ընկալվել հիմնականում իր «ավանդական» իմաստով (ֆիզիկական բռնություն, ծեծ և այլն) իսկ օրինակ տնտեսական, հոգեբանական բռնության դրսևորումները ամենաշատն են նշվել «դժվարանում եմ պատասխանել» տարբերակի ներքո: Սա նշանակում է, որ իրազեկման միջոցառումները պետք է շարունակեն մնալ ակտուալ, և հարկավոր է բարձրացնել բռնության տարբեր տեսակների վերաբերյալ իրազեկվածության աստիճանը:

Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ բռնության հաճախականությունը տանը կամ ընտանիքում

Ընտանեկան բռնության հաճախականությունը ըստ միավորված ինդեքսների, 1-4 բալային հաճախականության սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է երբեք, 4-ը՝ միշտ

Նկարագրված իրավիճակներից յուրաքանչյուրը ի՞նչ հաճախականությամբ է տեղի ունենում անձամբ Ձեզ հետ, <u>տանը կամ ընտանիքում:</u> *Հաճախականության գնահատման համար օգտագործեք հետևյալ սանդղակը՝ 1.*երբեք, 2. երբեմն, 3. հաճախ, 4. մշապես, 98 հրաժարվում եմ պատասխանել, 99 դժվարանում եմ պատասխանել:

	Սեռական	Անտեսում	Ֆիզիկական	Տնտեսական	Հոգեբանական	Սոցիալական
Երբեք	86,7	79,3	77,8%	74,7%	67,8%	63,5%
Երբեմն	4,4	14,1	9,8%	15,6%	18,3%	18,3%
Հաճախ	2,2	2,2	3,2%	1,6%	4,5%	7,2%
Միշտ	2,2	2,2	5,3%	5,1%	6,4%	7,0%
ԴՊ			2,8%	2,2%	2,6%	3,3%
ՀՊ	4,4	2,2	1,1%	,8%	,4%	,7%

Գծապատկերից պարզ է դառնում, որ բռնության հոգեբանական և սոցիալական տիպերը ամենահաճախն են կատարվում հաշմանդամություն ունեցող կանանց հետ: Դա դրսևորվում է ինչպես արհամարհանքի, վիրավորանքների, մեկուսացման, այնպես էլ երբեմն գերհոգատարության տեսքով: Բավականին հաճախ են նաև տնտեսական բռնության դրսևորումները:

«Երեխաս աուտիզմ ունի: Երբեմն մարդիկ երեխային խղճալով քաղցրավենիք, գումար էին տալիս, իսկ նախկին ամուսինս, ով չէր աշխատում, վերցնում էր այդ գումարը, իր համար ծխախոտ, ալկոհոլ գնում: Հիմա, երբ բաժանվել եմ նրանից, և՛ ես եմ հանգիստս գտել, և՛ երեխաս է իրեն ավելի լավ զգում»,- պատմում է 42-ամյա մասնակիցներից մեկը:

Քիչ չէին նաև ընտանիքում հաշմանդամություն ունեցող կանանց կարիքների անտեսման դեպքերը:

«Ինձ ասում էին՝ դու քո հին շորերով պիտի յոլա գնաս, մոդան քո խելքի բանը չի, բավարարվիր ունեցածովդ: Ես պիտի հարմարվեի և ընդունեի, որ ունեցածս հագուստը պիտի հագնեմ ութ, տասը տարի... Միգուցե դրանով տանը ինձ փորձում էին երես չտալ, բայց երբ ծնողներն աջակցում են իրենց զավակներին, որ նոմալ հագուստով դուրս գան, մի՞թե դա երես տալ է»:

Մտավոր խնդիր ունեցող 38-ամյա աղջիկ

Բռնության հանդեպ խոցելիության ինդեքսը ըստ սոցիալ-ժողովրդագրական չափանիշների

Ընտանեկան բռնության դրսևորումների տարածվածությունը բացահայտելուց զատ, հետազոտական կարևոր նպատակներից մեկը բռնության տեսանկյունից առավել խոցելի խմբեր բացահայտելն է, բռնության կանխարգելման առավել հասցեական և թիրախավորված մոտեցումներ ձևակերպելու համար: Այդ նպատակով, քանակական հարցման հարցաթերթը ներառում է ծավալուն սոցիալ-ժողովրդագրական բաժին, բռնության հաճախականության և սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների միջև կապեր բացահայտելու նպատակով: Առկա տվյալները թույլ տվեցին բացահայտել ընտանեկան բռնության հաճախականության միտումները հարցված անձանց շրջանում՝ ըստ տարիքի, աշխատանք ունենալ/չունենալու չափանիշի, ամուսնական կարգավիճակի, բարեկեցության, հաշմանդամության խմբի, բնակավայրի տեսակի:

Գծապատկերում ներկայացված է բռնության 26 դրսևորումների հաճախականության ընդհանրացված ինդեքսը: Միավորելով դրսևորումները ըստ բռնության տեսակների, պարզ է դառնում, որ տանը և ընտանիքում բռնության սոցիալական և հոգեբանական տիպը ամենից բարձր հաճախականությամբ է տեղի ունենում:

Բռնության հանդեպ խոցելիության ինդեքսը ըստ տարիքի, *1-4 բալային հաճախականության սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է երբեք, 4-ը՝ միշտ*

Տարիքը	Բռնության հանդեպ խոցելիության միջինացված ինդեքսը
19-25	1.38
26-35	1.34
36-50	1.34
51-61	1.96

Ընդհանրացնելով բռնության 26 դրսևորումների միջինացված ինդեքսները ըստ տարիքային խմբերի, տեսնում ենք, որ բռնության հանդեպ ամենախոցելի խումբը 50-ից բարձր տարիքային խումբն է:

Բռնության հանդեպ խոցելիության ինդեքսը ըստ վարձատրվող աշխատանք կատարելու չափանիշի, *1-4 բալային հաճախականության սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է երբեք, 4-ը՝ միշտ*

Բռնության 26 կետերի հաճախականության ընդհանրացված ինդեքսը	Կատարում է վարձատրվող աշխատանք	Չի կատարում վարձատրվող աշխատանք
	1.3903	1.4613

Գծապատկերից պարզ է դառնում, որ վարձատրվող աշխատանք չկատարող հարցվողների դեպքում բռնության 26 դրսևորումների միջինացված ինդեքսը փոքր ինչ բարձր է, այսինքն, տանը կամ ընտանիքում նրանք ավելի հաճախ են ենթարկվում բռնության:

Բռնության 26 դրսևորումները՝ դասավորված «վարձատրվող աշխատանք չի կատարում» տարբերակի նվազման կարգով	Կատարում է վարձատրվող աշխատանք	Չի կատարում վարձատրվող աշխատանք
Ինքնագնահատականը, ինքնավստահությունը նվազեցնող խոսքերը (դու դա չես կարող, դա քո ուժերից վեր է և այլն)	1.6452	2.0588
Ծաղրական կատակները	1.6452	1.7885
Արհամարհանքը (կարևորություն չտալը, անուշադրության մատնելը)	1.5294	1.7843
Ամոթանք տալը, մեղադրանքները	1.5625	1.7800
Անձնական կյանքի վերաբերյալ որոշումների վերահսկումը (զուգընկեր ունենալ, ամուսնանալ, երեխա ունենալ և այլն)	1.5806	1.7800
Ավելորդության զգացում առաջացնելը	1.5588	1.7255
Տեղաշարժերի՝ որևէ տեղ գնալու վերահսկումը, սահմանափակումը	1.7273	1.6923
Ընկերների, ծանոթների, այլ մարդկանց հետ շփումների վերահսկումը, սահմանափակումը	1.5938	1.6735
Գումարից զրկելը, վերահսկելը, տնօրինելը (հաշմանդամության համար պետության կողմից տրվող գումարը, աշխատավարձը կամ այլ գումար)	1.3529	1.6400
Գումարից զրկելու սպառնալիքը	1.3235	1.4808
Ընտանիքով հյուր կամ որևէ այլ վայր գնալուց տանը թողնելը	1.5000	1.4490
Քաշքշելը, հրելը, ապտակելը	1.2727	1.4423
Աշխատելը կամ սովորելը արգելելը	1.3939	1.4314
Ծեծելու սպառնալիքը	1.3125	1.3800
Աշխատել կամ սովորել արգելելու սպառնալիքը	1.4118	1.3333
Բուժման և վերականգնողական հնարավորություններից, դեղորայքից, աջակցող տեխնոլոգիաներից զրկելը	1.1765	1.3265
Տնից դուրս անելու և/կամ հատուկ փակ հաստատությունում տեղավորելու սպառնալիքը	1.3636	1.3077
Հեռախոսից, համակարգչից կամ կապի այլ միջոցներից զրկելը	1.2813	1.2745
Ստիպողաբար հանգստացնող դեղորայք օգտագործելը	1.2121	1.2600
Որևէ բութ առարկայով հարվածելը (գոտիով, կոշիկով և այլն)	1.2188	1.2353
Հատուկ կարիքները անտեսելը	1.2424	1.2353
Հեռախոսից, համակարգչից կամ կապի այլ միջոցներից զրկելու սպառնալիքը	1.3438	1.2157
Ծակող-կտրող գործիքով հարվածելը (դանակով կամ զենքով)	1.1875	1.1923

Կամքին հակառակ կամ անօգնական վիճակն օգտագործելով կամ սպառնալով սեռական օրգաններին ձեռք տալը, մարմնի այլ մասերին դիպչելը, ստիպողաբար այլ մարդու մարմնի մասերին դիպչելը, սեռական հարաբերություններ ունենալը	1.1613	1.1837
Հագուստից զրկելը	1.3235	1.1765
Կամքին հակառակ սեռական հարաբերություն ունենալու, սեռական օրգաններին ձեռք տալու, ստիպողաբար այլ մարդու սեռական օրգաններին ձեռք տալու սպառնալիքը	1.2258	1.1458

Այստեղ պարզ է դառնում, որ վարձատրվող աշխատանք չկատարող հարցվողները տանը կամ ընտանիքում առավել հաճախ ենթարկվում են հոգեբանական բռնության, մասնավորապես՝ արհամարհանքի, ինքնագնահատականը նվաստացնող խոսքերի, մեղադրանքների և այլն, ինչպես նաև ավելի հաճախ են միջամտում նրանց անձնական կյանքի որոշումների կայացմանը:

Բռնության 26 դրսևորումների ընդհանրացված ինդեքսը ըստ հաշմանդամության խմբի

Բռնության 26 դրսևորումների հաճախականության ընդհանրացված ինդեքսները ըստ հաշմանդամության խմբի, 1-4 բալային հաճախականության սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է երբեք, 5-ը՝ միշտ

	Առաջին խումբ	Երկրորդ խումբ	Երրորդ խումբ
Բռնության 26 դրսևորումների միջինացված ինդեքսը	1.2346	1.2425	1.1917

Պարզ է դառնում, որ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ տանը կամ ընտանիքում բռնություն ավելի հաճախ է տեղի ունենում, քան առաջին և երրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ:

Բռնության 26 դրսևորումներից յուրաքանչյուրի հաճախականության միջինացված ինդեքսը՝ ըստ հաշմանդամության խմբերի:

Բռնության 26 դրսևորումները	Առաջին	Երկրորդ	Երրորդ
Ծաղրական կատակները	1.1667	1.3846	1.0000
Ամոթանք տալը, մեղադրանքները	1.5000	1.4286	1.4000
Ավելորդության զգացում առաջացնելը	1.5000	1.5000	1.4000
Ինքնագնահատականը, ինքնավստահությունը նվազեցնող խոսքերը (դու դա չես կարող, դա քո ուժերից վեր է և այլն)	1.2000	1.5385	1.5000
Արհամարհանքը (կարևորություն չտալը, անուշադրության մատնելը)	1.0000	1.3571	2.0000
Ընկերների, ծանոթների, այլ մարդկանց հետ շփումների վերահսկումը, սահմանափակումը	1.3333	1.5455	1.5000
Տեղաշարժերի՝ որևէ տեղ գնալու վերահսկումը, սահմանափակումը	1.5000	1.4286	1.5000
Ընտանիքով հյուր կամ որևէ այլ վայր գնալուց տանը թողնելը	1.3333	1.3846	1.1000
Անձնական կյանքի վերաբերյալ որոշումների վերահսկումը (զուգընկեր ունենալ, ամուսնանալ,	1.8000	1.2308	1.6667

երեխա ունենալ և այլն)			
Կամքին հակառակ սեռական հարաբերություն ունենալու, սեռական օրգաններին ձեռք տալու, ստիպողաբար այլ մարդու սեռական օրգաններին ձեռք տալու սպառնալիքը	1.0000	1.1818	1.0000
Կամքին հակառակ կամ անօգնական վիճակն օգտագործելով կամ սպառնալով սեռական օրգաններին ձեռք տալը, մարմնի այլ մասերին դիպչելը, ստիպողաբար այլ մարդու մարմնի մասերին դիպչելը, սեռական հարաբերություններ ունենալը	1.5000	1.0000	1.0000
Ծեծելու սպառնալիքը	1.1667	1.1429	1.0000
Քաշքշելը, հրելը, ապտակելը	1.3333	1.2143	1.0000
Որևէ բութ առարկայով հարվածելը (գոտիով, կոշիկով և այլն)	1.0000	1.1538	1.0000
Ծակող-կտրող գործիքով հարվածելը (դանակով կամ զենքով)	1.3333	1.1538	1.0000
Բուժման և վերականգնողական հնարավորություններից, դեղորայքից, աջակցող տեխնոլոգիաներից զրկելը	1.0000	1.2143	1.0000
Հատուկ կարիքները անտեսելը	1.0000	1.1429	1.1818
Գումարից զրկելու սպառնալիքը	1.1667	1.1429	1.0909
Գումարից զրկելը, վերահսկելը տնօրինելը (հաշմանդամության համար պետության կողմից տրվող գումարը, աշխատավարձը կամ այլ գումար)	1.2000	1.4286	1.0000
Աշխատել կամ սովորել արգելելու սպառնալիքը	1.3333	1.1429	1.0000
Աշխատելը կամ սովորելը արգելելը	1.4000	1.0769	1.0000
Հագուստից զրկելը	1.0000	1.0714	1.2000
Հեռախոսից, համակարգչից կամ կապի այլ միջոցներից զրկելու սպառնալիքը	1.1667	1.0714	1.2222
Հեռախոսից, համակարգչից կամ կապի այլ միջոցներից զրկելը	1.1667	1.0000	1.2222
Տնից դուրս անելու և/կամ հատուկ փակ հաստատությունում տեղավորելու սպառնալիքը	1.0000	1.2143	1.0000
Ստիպողաբար հանգստացնող դեղորայք օգտագործելը	1.0000	1.1538	1.0000

Բռնության 26 դրսևորումների հաճախականության միջինացված ինդեքսը՝ ըստ հաշմանդամության տեսակի

Տանը կամ ընտանիքում ամենահաճախը բռնության են ենթարկվում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կանայք, այնուհետև՝ մանկական ուղեղային կաթված ունեցող կանայք:

Հաշմանդամության տեսակը	Բռնության հաճախականության միջինացված ինդեքսը
Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող	1.9423
Մանկական ուղեղային կաթված	1.9307
Լսողական խնդիրներ ունեցող	1.6459
Մտավոր խնդիրներ ունեցող	1.3840
Տեսողական խնդիրներ ունեցող	1.3462
Հենաշարժողական	1.2567
Այլ	1.2308

Խոսելու դժվարություններ ունեցող	1.1667
Էպիլեպսիա	1.0769
Զարգացման դժվարություններ ունեցող	1.0000

Այսպիսով, որպես հաշմանդամության տեսանկյունից առավել խոցելի խմբեր, կարող ենք առանձնացնել, 51-ից բարձր տարիքային խմբին պատկանող, վարձատրվող աշխատանք չկատարող, հաշմանդամության երկրորդ խումբ ունեցող, հոգեկան առողջության խնդիրներ կամ մանկական ուղեղային կաթված ունեցող կանանց:

Բռնության պատճառները

Անդրադառնալով ֆոկուս-խմբային քննարկումների բացահայտումներին՝ փոքր ինչ կանգ առնենք սոցիալ-հոգեբանական բռնության պատճառների և համատեքստի վերհանման վրա: Վերջինս հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ դրսևորվում է 3 հիմնական համատեքստերով.

- **Անվստահություն հաշմանդամություն ունեցող անձի ուժերի նկատմամբ՝ պայմանավորված անձի ֆիզիկական, մտավոր, կամ հոգեբանական խնդիրներով:** Հարցված կանանց պնդմամբ՝ հաճախ սահմանափակվում է նրանց սոցիալական կյանքին մասնակցելու, ազատ տեղաշարժվելու իրավունքը՝ նրանց ներուժը թերագնահատելու պատճառով: Ուժերի հանդեպ նման անվստահությունը առկա է ընդհուպ մինչև կենցաղային գործերին մասնակցությունը խոչընդոտելու աստիճան (տան, տնտեսության մաքրության գործերը):

Քննարկման մասնակիցներն ընդգծում են, որ իրենց ուժերի թերագնահատումը համարում են հոգեբանական բռնություն, որի արդյունքում ընտանիքի անդամների կողմից քաջալերվելու և հասարակության մեջ ավելի վստահ լինելու փոխարեն նրանք դառնում են ավելի ներփակ: Մասնակիցներից մեկը ով ունի ֆիզիկական խնդիր, նշեց, որ ընտանիքում մշտապես թերագնահատել են իր կարողությունները.

> *«Ես հաշմանդամություն ունեմ ու երբ ինձ ասում են՝ դու այս կամ այն բանը չես կարող անել… խղճում են: Ես շատ եմ վիրավորվում: Իրականում ես շատ բան կարող եմ անել և իմ հաշմանդամությունը խոչընդոտ չէ: Երեք ամիս է, մայրիկիս երկու ձեռքերը կոտրված են, ես եմ նրան խնամում: Քույրեր ունեմ, եղբայր, որը Ռուսաստանում է ապրում, քույրերս միայն տեսակցելու են գալիս, ես եմ ամբողջ օրը նրան խնամում, օգնում, որ տեղաշարժվի»:*

- **Հաշմանդամություն ունեցող ընտանիքի անդամի գոյության փաստը հասարակությունից թաքցնելու ձգտումը:** Սա հաշմանդամություն ունեցող անձի ֆիզիկական և սոցիալական մեկուսացման պատճառ է դառնում: Քննարկումների ժամանակ նշվեցին դեպքեր, երբ հաշմանդամություն ունեցող անձի գոյության մասին հարևանները չեն իմացել: Սա կապված է հասարակությունում առկա կարծրատիպերի, չընդունվելու, քննադատվելու վախի հետ:
- **Գերհոգատարությունը հաշմանդամություն ունեցող անձի հանդեպ:** Թեև, այս կոնտեքստում հաշմանդամություն ունեցող անձինք չեն ենթարկվում բռնության կամ ճնշումների, այնուամենայնիվ նշում են, որ գերհոգատարությունը ևս սահմանափակում է իրենց ներուժը լիարժեք իրացնելու հեռանկարը:
- **Ենթակառուցվածքների պակասը կամ բացակայությունը:** Բացի սուբյեկտիվ պատճառներից, մասնակիցները նաև նշում են այլ օբյեկտիվ պատճառներ, որոնց հետևանքով նրանք չեն կարողանում ինքնուրույն և լիարժեք մասնակցել սոցիալական կյանքին, աշխատանք գտնել, իրենց ներդրումն ունենալ երկրի զարգացման գործընթացին և այլն (օրինակ՝ համապատասխան տրանսպորտային

միջոցների բացակայությունը, շենքերի հարմարեցված չլինելը հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին և այլն):

Ո՞վ է բռնություն գործադրող անձը

Հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ ընտանիքում բռնություն գործադրող անձանց վերաբերյալ հարցը ևս ներառված է եղել թե՛ հարցաթերթիկային հարցման, թե՛ ֆոկուս-խմբային քննարկումների ուղեցույցում:

Հարցաթերթիկային հարցման դեպքում հարցը ձևակերպված էր անձամբ հարցվողի վերաբերյալ.

Ասացե՛ք, խնդրեմ, ընտանիքում առավել հաճախ ու՞մ կողմից եք ենթարկվում բռնության (ճնշումների): Այս հարցում նկատի ունենք ընտանիքի այն անդամներին, որոնք Ձեզ հետ նույն տանն են բնակվում:

Ֆոկուս-խմբային քննարկումների և առցանց հարցումների արդյունքում ստացանք ընտանիքում բռնություն գործադրած անձի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ:

Այսպիսով, բռնություն ավելի հաճախ կիրառվում է ընտանիքի տղամարդ անդամի կողմից (եղբայր, հայր, ամուսին, սկեսրայր, քեռի, մոր սիրեկան):

Ամենից հաճախ որպես բռնարար նշվել է եղբայրը: Սա կապված է այն հանգամանքի հետ, որ հաշմանդամություն ունեցող կանանց մեծ մասը ամուսնացած չէ, և բնակվում է իր ծնողների ընտանիքում:

Որպես բռնություն կիրառող կին ամենից հաճախ նշվել է «մայր» տարբերակը: Մասնակիցները իրենք այս փաստը մեկնաբանում են այն հանգամանքով, որ հաշմանդամություն ունեցող անձի խնամքով հիմնականում զբաղվում է մայրը, նրա հետ ամենից շատ ժամանակ անցկացնում է մայրը, ուստի ամենից հաճախ էլ բռնություն է գործադրում մայրը: Ընդ որում, բռնությունը կարող է լինել ինչպես գերխնամքի և գերհոգատարության տեսքով, այնպես էլ ֆիզիկական բռնության և վիրավորանքների:

Այլ տարբերակներ նշվել են՝ քույրը, տատիկը, տալը, հորաքույրը, սկեսուրը և այլն:

Ինչպես նաև, նշվել է, որ հաշմանդամություն ունեցող անձը բռնության է ենթարկվում ընտանիքի բոլոր անդամների կողմից:

Ինչպե՞ս են վարվում բռնության ենթարկվելու դեպքում կամ վարքի ռազմավարությունները

Բռնության ենթարկվելու դեպքում հնարավոր գործողություններին վերաբերող հարցերի խումբը ևս ներառված է եղել և՛ ֆոկուս-խմբային քննարկման ուղեցույցում, և՛ քանակական հարցման հարցաթերթում:

Այս առումով, քննարկումներին մասնակցած աղջիկների և կանանց շրջանում առկա են ինչպես բռնության հանդեպ ծայրահեղ հարմարվողական և հանդուրժող վերաբերմունքի, այնպես էլ ինքնապաշտպանության և բռնության դեմ պայքարելու դեպքեր:

Ֆոկուս-խմբային քննարկումների ժամանակ, առանց որևէ հուշման տրված հարցի սպոնտան պատասխանները ամբողջացնելով, նկատում ենք որ պրոակտիվությունը և իրավիճակի հետ չհամակերպվելը, իրավիճակից ելքեր գտնելը մասնակիցների գերակշիռ մասի համար ավելի ընդունելի մոտեցում է քան համակերպվելը և շարունակել բռնության ենթարկվելը:

Այսպիսով, եթե փորձենք դուրս բերել բռնության ենթարկվելու պարագայում գործողությունների հնարավոր առանցքները, ապա կստանանք ենք վարքի հետևյալ **ռազմավարությունները.**

- **Պայքար ինքնազարգացման, ուսուցման, հզորացման, համարձակության, ինքնահարգանքի ճանապարհով:** Առավել նախաձեռնող մասնակիցները նշում էին անձի մոտ այնպիսի հատկանիշների առկայության կարևորությունը, ինչպիսիք են՝ ինքնահարգանքը, ինքն իրեն չթերագնահատելը, շրջապատի կարծիքով չառաջնորդվելը, կամքի ուժով առաջ շարժվելը, իրազեկ լինելը, սեփական ուժերին վստահելը և այլն:
- **Դիմել օգնության ոչ ֆորմալ կառույցների և անձանց** *(վստահելի, մոտ մարդկանց, հարազատների, հարևանին, բարեկամին,վստահելի անձի, հարազատ մարդկանց, ընկերների և այլն)*
- **Դիմել օգնության ֆորմալ կառույցների, կազմակերպությունների կամ անձանց** *(տարբերակները դասավորված են, ըստ քննարկումների ժամանակ նշելու հաճախականության)*
- Դիմել իրավապաշտպան ՀԿ-ների
- Դիմել ոստիկանություն
- Դիմել ՄԻՊ
- Դիմել հոգեբանի
- Դիմել սոցիալական ծառայություն
- Դիմել ՁԼՄ-ների
- **Համակերպվել և ոչինչ չանել**

Անդրադառնալով նույն հարցի վերաբերյալ հարցաթերթիկային հարցման արդյունքում ստացված տվյալներին՝ նշենք, որ հաշմանդամություն ունեցող կանանց համար առավել վստահելի օղակը հասարակական կազմակերպություններն են:

Ասացե՛ք, խնդրեմ, ընտանեկան բռնության (ճնշումների) ենթարկվելու դեպքում ինչպե՞ս եք վարվել: Հնարավոր է նշել 1-ից ավելի տարբերակ:



Ըստ հարցման տվյալների՝ տանը կամ ընտանիքում բռնության ենթարկվելու դեպքում առաջին հերթին դիմել են/կդիմեն հասարակական կազմակերպությունների, այնուհետև աշխատանքային և սոցիալական հարցերի նախարարություն, ոստիկանություն: Սեփական ուժերով պայքարելու տարբերակը ամենաքիչ ձայներն է հավաքել՝ աջակցության կենտրոններ դիմելու տարբերակի հետ միասին (4.7 %):

Սակայն, ինչպես նշել էինք, ֆոկուս-խմբային քննարկումների ժամանակ, նկատվում էր պայքարի ոգի: Հավանաբար, ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցները ակտիվորեն մասնակցում են հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ների կողմից կազմակերպվող միջոցառումների, դասընթացների, և միգուցե այդ պատճառով ավելի իրազեկ և նախաձեռնող են: Սակայն, ընտանիքի կողմից ամբողջովին մեկուսացված, հասարակական կյանքին որևէ կերպ չներառված անձանց վերաբերմունքը գուցե տարբերվում է, և նրանք տանը կամ ընտանիքում բռնության ենթարկվելու առավել մեծ ռիսկային խմբում են:

Բռնության ենթարկված անձանց աջակցող կառույցների, մարմինների, անձանց դիմելու դժվարությունները և խոչընդոտները

Դժվարություններն ու խոչընդոտները բացահայտելու նպատակով հարցերի խումբ է ներառված եղել և՛ հարցաթերթիկային հարցման հարցաթերթում և՛ ֆոկուս խմբային քննարկման ուղեցույցում: Ցավոք, հարցաթերթիկային հարցման հարցախմբին պատասխանել է հարցվողների միայն 6 %-ը, ինչը թույլ չի տալիս կատարել վիճակագրական ընդհանրացումներ:

Այնուամենայնիվ, բռնության ենթարկվելու դեպքում վարքի ռազմավարությունների համատեքստում, ստացանք համապարփակ տեղեկատվություն նաև այն մասին, թե ինչ մարմինների, կառույցների կամ անձանց կդիմեին/կամ պետք է դիմել, բռնության ենթարկվելու դեպքում:

ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԵՎ ՄԵԿ ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հետազոտությունն անցկացվել է Երևան քաղաքում, Լոռու, Սյունիքի, Շիրակի մարզերում, մասնավորապես հետևյալ կառույցներում՝ «Կանանց աջակցման կենտրոն/ապաստարան» ՀԿ, «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ, «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալ հոգածության կենտրոն» ՊՈԱԿ, Նուբարաշենի «Երեխայի և ընտանքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ, «Սյունիքի մարզի երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամ», «Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ, «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ: Մտահոգիչ փաստ է, որ մյուս մարզերում չկան բռնության ենթարկված անձանց ծառայություններ մատուցող աջակցության կենտրոններ և ապաստարաններ: **Հետազոտությունն ամբողջովին հիմնված է ինքնագնահատման մեթոդի վրա:** Դիտարկված կենտրոններից միայն 2-ում՝ «Կանանց աջակցման կենտրոնում» և «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոնում» էին հաշվառված բռնության ենթարկված հաշմանդամություն ունեցող անձինք: Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության փորձ չունենալու պատճառով դիտարկված կենտրոնները դժվարանում էին գնահատել այդ ոլորտում իրենց կարիքները: Սակայն առկա է պատրաստակամություն ինչպես վերապատրաստվելու, այնպես էլ հաստատության ֆիզիկական միջավայրը հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին համապատասխանեցնելու համար: Նշվում էր կարիքների գնահատման անհրաժեշտությունը մասնագետի կողմից: Ինչպես նաև, վերապատրաստումների անհրաժեշտությունը ոչ միայն հաշմանդամություն ունեցող անձանց հետ արդյունավետ աշխատելու հարցում, այլև բռնության ենթարկված անձի, բռնարարի, ընտանեկան թերապիայի հմտությունների ոլորտում:

«Կանանց աջակցության կենտրոնում հաշվառված է հաշմանդամություն ունեցող 10 անձ՝ լսողական,հոգեկան առողջության, տեսողական, մտավոր զարգացման, ֆիզիկական խնդիրներ ունեցող անձինք, իսկ Գյումրի քաղաքի սոցիալական հոգածության կենտրոն 2018-2019թթ. դիմել է՝ տեղաշարժման խնդիրներ, շաքարային դիաբետ, վերջույթների անդամահատում, և մտավոր զարգացման խնդիրներ ունեցող 4 անձ:

Հիմնականում, հաշմանդամություն ունեցող անձանց հաշվառումը իրականացվում է հաշվառման քարտում հաշմանդամությունը որպես լրացուցիչ տվյալ նշելով:

Բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների և ապաստարանների ներառականության և մատչելիության ընդհանրացված ինդեքսը՝ ըստ տարածաշրջանի, 1-5 բալային սանդղակով

Տարածաշրջանը	Հաստատությունների ներառականության և մատչելիության ինդեքսը 1-5 բալային սանդղակով
Երևան 4	2.33
Լոռի 1	3.50
Սյունիք 1	2.83
Շիրակ 1	2.67

Գծապատկերում ներկայացված է Երևան քաղաքի 1 հասարակական և 3 պետական կառույցների ընդհանրացված ինդեքսը: Մոնիտորինգ-գնահատում անցած կենտրոնների շրջանում «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության մատչելիության և ներառականության, ինչպես նաև աշխատակազմի հմտությունների ցուցանիշները ամենաբարձրն են գնահատվել: «Կանանց աջակցման կենտրոն»-ին կից նաև գործում է Հանրապետությունում միակ ապաստարանը: Բայց, քանի որ Երևան

քաղաքի մյուս աջակցության կենտրոնների գնահատման ինդեքսը շատ ավելի ցածր է եղել, պատկերում տարածաշրջանային վերլուծությամբ ստացվել է ցածր ցուցանիշ:

Պետական հաստատությունների կողմից կատարված ինքնագնահատման հիման վրա, ամենից բարձր մատչելիությունը և ներառականությունը ունի «Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը:

Հաստատությունների ներառականության և մատչելիության ընդհանրացված ինդեքսը (ներառականությունը հաշմանդամության բոլոր տեսակների համար)՝ ըստ տարածաշրջանի:

Բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների և ապաստարանների ներառականության և մատչելիության ընդհանրացված ինդեքսը՝ ըստ հաշմանդամության տեսակի և տարածաշրջանի, 1-5 բալային սանդղակով

Հաշմանդամության տեսակը	Երևան	Լոռի	Սյունիք	Ծիրակ
Լսողական խնդիրներ ունեցող անձանց համար	1.00	3.00	2.00	3.00
Տեսողական խնդիրներ ունեցող անձանց	1.00	2.00	1.00	1.00
Ֆիզիկական խնդիրներ ունեցող անձանց	1.50	3.00	3.00	1.00
Մտավոր զարգացման խնդիրներ ունեցող անձանց	3.75	4.00	5.00	4.00
Հոգեբանասոցիալական խնդիրներ ունեցող անձանց	3.50	4.00	1.00	2.00
Խոսելու դժվարություններ ունեցող անձանց	3.25	5.00	5.00	5.00
Ընդհանրացված ինդեքսը	2.33	3.50	2.83	2.67

Որպեսզի հասկանալի լինի, թե հաշմանդամության որ տեսակներին աջակցություն ցուցաբերելն է առավել ցածր գնահատվել, կազմվել է հաշմանդամության յուրաքանչյուր տեսակի մատչելիության գնահատման ընդհանրացված ինդեքսը:

Հաշմանդամության տեսակը	Մատչելիության միջինացված ինդեքսը նվազման կարգով, 1-5 բալային սանդղակով
Խոսելու դժվարություններ	4.56
Մտավոր զարգացման խնդիրներ	4.19
Հոգեբանասոցիալական խնդիրներ	2.63
Լսողական խնդիրներ	2.25
Ֆիզիկական խնդիրներ	2.13
Տեսողական խնդիրներ	1.25

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, առավել ցածր ներառականությունը և մատչելիությունը տեսողական, ֆիզիկական և լսողական խնդիրներ ունեցող անձանց համար է: Սա կապված է մասնագետների պակասի կամ բացակայության, անհրաժեշտ նյութերի և կահավորանքի բացակայության հետ:

Բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների և ապաստարանների ներառականությունը և մատչելիությունը լսողական խնդիրներ ունեցող անձանց համար

Լսողական խնդիրներ ունեցող անձանց համար դիտարկված հաստատության մատչելիության միջինացված ինդեքսը՝ **1.5** է, 1-5 բալային սանդղակով:

Հաստատության համապատասխանությունը լսողական խնդիրներ ունեցող անձանց կարիքներին	**Այո**	**Ոչ**
Հաստատության մասին պատմող հոլովակներում նշված է, որ այն մատչելի է լսողական խնդիրներ ունեցող անձանց համար	**0**	**7**
Հաստատությունն ունի լսողական խնդիրներ ունեցող անձանց հետ	**0**	**7**

հեռահաղորդակցությունը ապահովող համապատասխան միջոցներ		
Հաստատությունը պատասխանում է տեքստային հաղորդագրություններին աշխատանքային ժամից դուրս	**1**	**6**
Հաստատության կահավորանքը հարմարեցված է լսողական խնդիրներ ունեցող անձանց համար	**0**	**7**

- Մոնիտորինգին մասնակցած 7 հաստատություններից ոչ մեկի մասին պատմող հոլովակներում/հրապարակումներում և այլ տեղեկատվական հարթակներում, նշված չէ, որ այն մատչելի է լսողական խնդիրներ ունեցող անձանց համար:
- Մոնիտորինգին մասնակցած 7 կազմակերպություններից որևէ մեկը չունի լսողական խնդիրներ ունեցող անձանց հետ հեռահաղորդակցությունը ապահովելու համար օգտագործվող համապատասխան միջոցներ: Կապը փորձում են ապահովել ֆեյսբուքի, SMS հաղորդագրությունների, հարազատների միջոցով:
- Աշխատանքային ժամերից հետո տեքստային հաղորդագրություններին պատասխանում է մոնիտորինգին մասնակցած կազմակերպություններից միայն 1-ը՝ «Կանանց աջակցման կենտրոնը»:
- Մոնիտորինգին մասնակցած հաստատություններից որևէ մեկի կահավորանքը հարմարեցված չէ լսողական խնդիրներ ունեցող անձանց համար, ինչպես նաև կազմակերպություններից ոչ մեկում չկան ազդանշաններ/ուղղորդումներ:
- Աշխատակազմի հմտությունները գնահատվել է 1,5 բալ, 1-5 բալային սանդղակով:

<u>Վերապատրաստումների անհրաժեշտությունը լսողական խնդիրներ ունեցող անձանց հետ ավելի արդյունավետ աշխատելու համար</u>

Հարցմանը մասնակցած հաստատությունների մեծ մասում նշում էին, որ փորձի պակասի կամ բացակայության պատճառով, իրենք դժվարանում են գնահատել, թե ինչ վերապատրաստումների կարիք կա, և անհրաժեշտություն կա, որպեսզի մասնագիտական գնահատում իրականացվի կազմակերպության կարիքները սահմանելու համար: Այնուամենայնիվ, առանձնացվեցին անձնակազմի վերապատրաստման հետևյալ ուղղությունները.

- Ժեստերի լեզվի ուսուցում կամ վերապատրաստում
- Մասնագետի կողմից կարիքների գնահատում
- Հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու հմտություններ
- Բռնության ենթարկված անձի հետ աշխատանքի, բռնարարի հետ աշխատանքի հմտություններ,

Լսողական խնդիրներ ունեցող անձանց աջակցություն ցուցաբերելու հարցում հանդիպած դժվարությունները.

Լսողական խնդիրներ ունեցող անձանց աջակցություն ցուցաբերելու հարցում հիմնական դժվարությունը կապված է հաղորդակցման դժվարությունների հետ: Նշվել է նաև թարգմանչի կամ հարազատի մշտական առկայության անհրաժեշտությունը, լսողական խնդիրներ ունեցող անձանց հետ հաղորդակցությունը ապահովելու համար:

Հաստատության ներառականությունը տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար

Դիտարկված հաստատությունների մատչելիության միջինացված ինդեքսը գնահատվել է **1,2** բալ, 1-5 բալային սանդղակով:

- Հաստատությունը ներկայացնող գովազդները/բրոշյուրները կամ այլ տեղեկատվական նյութերը որևէ հաստատությունում մատչելի չեն տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար:

▪ Հաստատության կահավորանքը ևս որևէ հաստատությունում չի համապատասխանում տեսողական խնդիրներ ունեցող անձանց կարիքներին:

Հաստատության ֆիզիկական միջավայրի համապատասխանությունը տեսողական խնդիրներ ունեցող անձանց կարիքներին	Առկա է	Առկա չէ
Համապատասխան լուսավորություն	6	1
Ձայնային ազդանշաններ	0	7
Բրայլյան գրերով ուղղորդումներ	0	7
Մատչելի կրթական նյութեր	0	7

▪ Մոնիտորինգին մասնակցած կազմակերպությունների աշխատակազմի հմտությունների գնահատման միջինացված ինդեքսը տեսողական խնդիրներ ունեցող անձանց հետ աշխատելիս **1,7** բալ է, 1-5 բալային սանդղակով:

Գրեթե բոլոր հաստատությունների կողմից նշվեց, որ կա ինչպես հատուկ մասնագետի, այնպես էլ ոլորտային վերապատրաստումների կարիք: Նշվեց նաև, որ չունեն փորձ նշված ոլորտում և հետևաբար կարիք կա մասնագետի կողմից կազմակերպության կարիքների գնահատում իրականացնել, վերապատրաստումների վերաբերյալ: Նշվեց նաև ֆոնդհայթայթման վերաբերյալ վերապատրաստումների կարիքը:

Հաստատությունների մեծ մասը նշեց, որ դժվարանում է նշել թե ինչ խոչընդոտներ կան տեսողական խնդիրներ ունեցող անձանց աջակցություն ցուցաբերելու հարցում, քանի որ դեռևս չեն ունեցել շահառուներ: Իսկ հաստատություններից մեկի կողմից նշվեց, որ տեսողական խնդիրներ ունեցող անձանց մշտապես ուղեկցող աշխատակցի կարիք կա, ինչը դժվարություններ է ստեղծում:

Հաստատության մատչելիությունը ֆիզիկական խնդիրներ ունեցող անձանց համար

Ֆիզիկական խնդիրներ ունեցող անձանց համար հաստատության մատչելիության միջինացված ինդեքսը **2,0** է, 1-5 բալային սանդղակով:

▪ Հաստատություններից ոչ մեկը չունի հարմարեցված մեքենա՝ ֆիզիկական խնդիրներ ունեցող անձանց տեղափոխելու համար: Նշվեց, որ անհրաժեշտության դեպքում տրամադրվում են/կտրամադրեն կենտրոնի մեքենան, որոնք սակայն հարմարեցված չեն, կամ այլ ծախսերից կտրամադրեն տաքսի, քանի որ տեղափոխման համար գումար հատկացված չէ:

▪ Հաստատություններից ոչ մեկը չունի սանհանգույց ֆիզիկական խնդիրներ ունեցող անձանց համար:

Հաստատության մատչելիությունը ֆիզիկական խնդիրներ ունեցող անձանց համար	Այո	Ոչ
Հաստատության մուտքի մոտ 1:10 թեքությամբ թեքահարթակ և բռնաձողով թեքահարթակի առկայություն	1	6
Հաստատության ներսում հարթ հատակի առկայություն	2	5
Հաստատության դռների լայնությունը մեծ է կամ հավասար 90սմ	5	2
Սանհանգույց ֆիզիկական խնդիրներ ունեցող անձանց համար (տեղաշարժվելու լայն ու ազատ տարածությամբ, բռնաձողերով, հատուկ զուգարանակոնքով, լոգանքի համար աթոռակով...)	0	7
Համապատասխան կահավորանք ֆիզիկական խնդիրներ ունեցող անձանց համար (լայն տարածք, ցածր բարձրությամբ, անվասայլակով տեղաշարժվող անձանց համար, հենվելու համար աջակցող աթոռակներ): (Նշվածներից առկա է եղել միայն լայն տարածքը):	4	3

<u>Վերապատրաստումների անհրաժեշտությունը ֆիզիկական խնդիրներ ունեցող անձանց հետ ավելի արդյունավետ աշխատելու համար</u>

- Հաստատությունների ներկայացուցիչները հիմնականում դժվարանում են նշել, թե ինչ վերապատրաստումների կարիք ունեն: Առաջնահերթ նշում են մասնագետի կողմից հաստատության կարիքների գնահատումը, որի հիման վրա պարզ կլինի, թե ինչ վերապատրաստումների կարիք ունեն հաստատության աշխատակիցները: Նշվել է նաև, որ բացի հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատանքի ոլորտում վերապատրաստումներից, կարիք ունեն նաև ընտանեկան բռնության ոլորտում վերապատրաստումների, ինչպես նաև շենքային պայմանների համապատասխանեցման:

Աշխատանքի ընթացքում առաջացող դժվարությունները ևս դժվարանում են նկարագրել, քանի որ կենտրոնների մեծամասնությունը չունի ֆիզիկական խնդիրներ ունեցող անձանց աջակցելու փորձ: Այնուամենայնիվ, նշվեցին՝ շենքային պայմանների անմատչելիությունը (նեղ դռներ, շեմքեր, աստիճաններ, նեղ սենյակներ), ինչպես նաև՝ անձնակազմի պակասը, մասնավորապես նշվեց, որ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքով և աջակցմամբ զբաղվող աշխատակիցների կարիք կա:

Հաստատությունների ներառականությունը մտավոր զարգացման խնդիրներ ունեցող անձանց համար

Մտավոր զարգացման խնդիրներ ունեցող անձանց համար հաստատությունների ներառականության միջինացված ինդեքսը, բավականին բարձր է, համեմատ լսողական, տեսողական և ֆիզիկական խնդիրներ ունեցող անձանց համար մատչելիության միջինացված ինդեքսի: 1-5 բալային սանդղակով մատչելիությունը **4,0** բալ է: Անձնակազմի հմտությունները մտավոր զարգացման խնդիրներ ունեցող անձանց հետ աշխատելու համար ևս գնահատվել է բավականին բարձր, մասնավորապես, միջինացված ինդեքսը՝ 4,3:

Վերապատրաստումների անհրաժեշտությունը մտավոր զարգացման դժվարություններ ունեցող անձանց հետ աշխատանքի արդյունավետությունը բարելավելու համար

Այս դեպքում ևս, նշվեց, որ քանի որ նախկինում փորձ չեն ունեցել, դժվարանում են նշել, թե ինչ վերապատրաստման կարիք ունեն: Կարիք կա մասնագիտական գնահատման: Նշվեց նաև նոր մասնագիտական գրականության անհրաժեշտությունը, ինչպես նաև աշխատակիցների ոլորտային վերապատրաստման կարիքը:

Խոչընդոտների թվում նշվեց՝ հոգեբուժարանների և բժշկական հաստատությունների կողմից սխալ ախտորոշման դեպքերը, իրավական համակարգը, պետական համակարգի սխալները և բացասական վերաբերմունքը:

Հաստատության ներառականությունը հոգեբանասոցիալական խնդիրներ ունեցող անձանց համար

Ընդհանուր առմամբ, հոգեբանասոցիալական խնդիրներ ունեցող անձանց համար հաստատությունների ներառականության միջինացված ինդեքսը կազմում է **3,0 բալ**, 1-5 բալային սանդղակով: Իսկ աշխատակազմի հմտությունների գնահատման միջինացված ինդեքսը՝ **3,4** բալ, կրկին 1-5 բալային սանդղակով:

Վերապատրաստումների անհրաժեշտությունը հոգեբանասոցիալական խնդիրներ ունեցող անձանց հետ աշխատանքում

Հաստատություններից մեկը նշել է, որ հաստատության կանոնադրության համաձայն չեն աշխատում հոգեբանասոցիալական խնդիրներ ունեցող անձանց հետ և նրանց ուղղորդում են մասնագիտացված կենտրոններ: Կա ինչպես ընդհանուր

վերապատրաստման, այնպես էլ ընտանեկան թերապիայի ոլորտում վերապատրաստման անհրաժեշտություն, բռնարարի և բռնության ենթարկված անձի հետ աշխատանքի ոլորտում վերապատրաստումների, գրականության տրամադրման կարիք: Նշվեց նաև կարծիք, որ կարիք կա մասնագիտական գնահատման և ուղղորդման, թե ինչ վերապատրաստումների կարիք ունի հաստատությունը:

Հոգեբանասոցիալական խնդիրներ ունեցող անձանց հետ աշխատանքում նշվել են հետևյալ խոչընդոտները

- Բժշկական հաստատությունների և հոգեբուժարանների կողմից իրականացվող սխալ ախտորոշում
- Օրենսդրական և իրավական խոչընդոտներ
- Ընտանիքի հետ աշխատելու խնդիրներ
- Հոգեբանի/մասնագետի պակաս
- Պրակտիկայի և փորձի պակաս

Հաստատությունների ներառականությունը խոսելու խնդիրներ ունեցող անձանց համար

Հաստատության ներառականությունը ընդհանուր առմամբ խոսելու դժվարություններ ունեցող անձանց ներառականության տեսանկյունից կազմում է **4.0** բալ, 1-5 բալային սանդղակով:

Աշխատակազմի, խոսելու դժվարություններ ունեցող անձանց հետ աշխատելիու հմտությունները ևս գնահատվել է **4.0** բալ :

Վերապատրաստումների անհրաժեշտությունը խոսելու դժվարություններ ունեցող անձանց հետ ավելի արդյունավետ աշխատելու համար

Նշվել է ցանկացած վերապատրաստման, մասնագիտական վերապատրաստման, գրականության տրամադրման անհրաժեշտություն:

Խոչընդոտները կապված են մասնագետների պակասի, հաղորդակցության դժվարությունների հետ:

Բռնության ենթարկված անձանց համար կենտրոններին ահազանգելու հնարավորության/միջոցների հասանելիությունը ըստ հաշմանդամության տեսակների

Հաշմանդամության տեսակը	Գնահատման միջինացված ինդեքսը, նվազման կարգով
Ֆիզիկական խնդիրներ	2.57
Մտավոր զարգացման խնդիրներ	2.29
Հոգեկան առողջության խնդիրներ	2.29
Տեսողական խնդիրներ	1.86
Խոսելու խնդիրներ	1.71
Լսողական խնդիրներ	1.14

Կենտրոնների ֆիզիկական միջավայրի և կահավորման հասանելիությունը հաշմանդամության հետևյալ տեսակներից յուրաքանչյուրի համար

Հաշմանդամության տեսակը	Գնահատման միջինացված ինդեքսը
Խոսելու խնդիրներ	3.00

Հոգեկան առողջության խնդիրներ	2.86
Մտավոր զարգացման խնդիրներ	2.57
Լսողական խնդիրներ	1.86
Ֆիզիկական խնդիրներ	1.71
Տեսողական խնդիրներ	1.43

Կենտրոնների աշխատակիցների հմտությունների գնահատման միջինացված ինդեքսը հաշմանդամության հետևյալ տեսակներն ունեցող անձանց հետ աշխատանքի հարցում

Հաշմանդամության տեսակը	Գնահատման միջինացված ինդեքսը
Մտավոր զարգացման խնդիրներ ունեցող	3.57
Ֆիզիկական խնդիրներ ունեցող	3.29
Խոսելու դժվարություններ ունեցող	3.29
Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող	3.29
Տեսողական խնդիրներ ունեցող	2.33
Լսողական խնդիրներ ունեցող	2.00

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Տեղեկատվությունը հիմնված է ՀՀ ոստիկանությունից, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից, Առողջապահության նախարարությունից, Կրթության և գիտության նախարարությունից ստացված հարցումների պատասխանների վրա:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի[3] համաձայն՝ *ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում Լիազոր մարմինը իրականացնում է ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում՝ կառավարության որոշմամբ սահմանված կարգով՝ ընդգրկելով ինչպես ոստիկանության, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության, դատախազության և Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի, այնպես էլ վերջիններիս չգրանցած աջակցության կենտրոնների, խնամակալության և հոգաբարձության մարմինների, առողջապահության և կրթության բնագավառներում լիազոր հանրապետական գործադիր մարմինների տրամադրած տվյալները, և դրանց ընթացքի վերաբերյալ վիճակագրության վարում, ինչպես նաև այդ վիճակագրության ամենամյա հրապարակում իր պաշտոնական կայքում:*

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վրա Օրենքով դրված է պարտականություն՝ վարելու ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում, որը հիմնված է Օրենքի շրջանակներում տարբեր լիազորություններով օժտված պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, աջակցության կենտրոնների տրամադրած համալիր տվյալների վրա: Հաշվառումը պետք է իրականացվի ՀՀ կառավարության սահմանած կարգով, սակայն պետք է նշել, որ ընտանիքում բռնության դեպքերի հաշվառման կարգ դեռևս գոյություն չունի, իսկ կառավարության համապատասխան որոշման նախագիծը[4] դեռևս չի ընդունվել:

Նախագծում ներկայացված է ոչ միայն ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման հաշվետվության ձևը, այլև ոստիկանության, աջակցության կենտրոնի, դատական դեպարտամենտի կողմից լրացվող ընտանիքում բռնության դեպքի հաշվառման քարտերի ձևերը: Պետք է նկատել, որ սահմանված քարտերի ձևերից որևէ մեկը չի պարունակում ընտանիքում բռնությունից տուժած անձի հաշմանդամության մասին նշումի վանդակ:

<u>2018թ. ընթացքում և 2019թ. առաջին եռամսյակում ՀՀ-ում տեղի ունեցած ընտանիքում բռնության դեպքերի ընդհանուր քանակի և առանձին՝ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ կիրառված բռնության վերաբերյալ հարցումներ են ուղարկվել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին: Նրանցից ստացվել են հետևյալ պատասխանները.</u>

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 30.04.2019թ. գրությամբ հայտնել է, որ կառավարության կողմից ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնական հաշվառման նախագիծը չհաստատվելու հետևանքով նախարարության կողմից կենտրոնացված հաշվառում դեռևս չի իրականացվում:
- ՀՀ առողջապահության նախարարությունը հայտնել է, որ գերատեսչությունը ընտանիքում բռնության ենթարկված անձանց բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրում չի իրականացնում:

[3] տե՛ս Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մաս, 2-րդ կետ
[4] տե՛ս https://www.e-draft.am/projects/817/about

- ՀՀ կրթության և գիտության նախարարությունը հայտնել է, որ վիճակագրության վարման համար կառավարության համապատասխան որոշումն ընդունված չէ, և նախարարությունը 2018թ. ընթացքում և 2019թ. առաջին եռամսյակում ընտանիքում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ բռնության դեպքերի վերաբերյալ տեղեկատվության չի տիրապետում:
- ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությունը հայտնել է, որ ՀՀ ոստիկանության Ինֆորմացիոն կենտրոնում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ առանձին վիճակագրություն չի վարվում:
- ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունը ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ վիճակագրություն վարելիս նույնպես չի վարում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ իրականացված բռնությունների առանձին վիճակագրություն, սակայն հայտնում է, որ 2018թ. հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ բռնության դեպքեր չեն արձանագրվել, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց կողմից իրականացվել է բռնության 1 դեպք: 2019թ. առաջին եռամսյակի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ արձանագրվել է բռնության 2 դեպք, հաշմանդամություն ունեցող անձանց կողմից իրականացվել է բռնության 1 դեպք:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը պարտավորեցնում է պետական մարմիններին վերապատրաստումներ կազմակերպել ոլորտի համապատասխան աշխատակիցների հետ[5]: Հարցումներին ի պատասխան պետական մարմինները նշել են.

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը որևէ տեղեկատվություն չի տրամադրել հաշմանդամության տեսակի, հաշմանդամություն ունեցող անձանց հետ հաղորդակցման հմտությունների վերաբերյալ դասընթացներ կազմակերպելու մասին:
- ՀՀ առողջապահության նախարարությունը նշել է, որ նախարարության կողմից հաշմանդամություն ունեցող անձանց հետ հաղորդակցման հմտությունների վերաբերյալ դասընթացներ չեն իրականացվել:
- ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությունը հայտնել է, որ որ ոստիկանության՝ անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանման ծառայողները Երևանի լսողության խնդիրներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրում պարբերաբար մասնակցել են վերապատրաստման դասընթացների, որտեղ սովորել են ժեստերի լեզու՝ անհրաժեշտության դեպքում լսողության խնդիրներ ունեցող երեխաների հետ ազատ շփվումը ապահովելու, վերջիններիս խնդիրները հասկանալու նպատակով:

Պետական մարմինները Օրենքի շրջանակներում իրենց վերապահված լիազորությունների իրականացումը և շենքային պայմանները հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի լինելու մասով հայտնել են.

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նշել է, որ ընտանիքում բռնության ոլորտին առնչվող իրավական ակտերը, բռնության ենթարկված անձանց ծառայություններ մատուցող կազմակերպությունների տվյալները տեղադրված են նախարարության պաշտոնական կայքում http://www.mlsa.am/, իսկ տեղեկատվությունը հասանելի է յուրաքանչյուրի համար:

- ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությունը հայտնել է, որ ստորաբաժանումների մասնաշենքերի մի մասը համալրված են թեքահարթակներով՝

[5] տե՛ս Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մաս, 6-րդ կետ, 15-րդ հոդվածի 1-ին մաս, 5-րդ կետ, 14-րդ հոդվածի 1-ին մաս, 2-րդ կետ, 16-րդ հոդվածի 1-ին մաս, 1-ին կետ, 17-րդ հոդվածի 1-ին մաս, 3-րդ կետ

տեխնիկապես հարմարեցված լինելով տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց: Հաշմանդամություն ունեցող և ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցելու և համապատասխան կառույցներ ուղղորդելու նպատակով ՀՀ ոստիկանության բաժիններում տեղադրվել են տեղեկատվական անկյուններ, որտեղ առկա են ընտանիքում բռնության մասին գրականություն, ՀՀ-ում ընտանիքում բռնության ոլորտում գործող և ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների բուկլետները, թեժ գծերի հեռախոսահամարներ: Միաժամանակ, հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփումն ապահովելու նպատակով ոստիկանության բաժին է հրավիրվում հատուկ մասնագետ, ով ունակ է հաղորդակցվելու լսողական և խոսակցական խնդիրներ ունեցող անձանց հետ:

- ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունը հայտնել է, որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության շտաբի օպերատիվ կառավարման կենտրոնում գործում է 1-02 հեռախոսահամարը, իսկ «թեժ գիծ» ծառայության հեռախոսահամարները գործում են ՀՀ ոստիկանության շտաբի հերթապահ ծառայության վարչությունում: ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի, Քանաքեռ-Զեյթունի, Մաշտոցի, Նոր Նորքի, «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժինների, Դավիթաշենի և Ավանի բաժանմունքների վարչական շենքերը հարմարեցված են տեղաշարժողական դժվարություններ ունեցող անձանց համար, շքամուտքերի հարևանությամբ առկա են թեքահարթակներ, իսկ Մալաթիայի, Էրեբունու, Կենտրոնականի, Շենգավիթի և Կ. Դեմիրճյանի անվան մետրոպոլիտենի պահպանության բաժինների վարչական շենքերը հարմարեցված չեն: ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի ենթակա ստորաբաժանումները հագեցած չեն այնպիսի սարքավորումներով, որոնցով հնարավոր լինի իրականացնել լսողական կամ տեսողական խնդիրներ ունեցող անձանց հետ տեսազանգ՝ այդ կերպ ապահովելով ընտանիքում բռնության վերաբերյալ հաղորդումներ ընդունող աշխատակիցների շփումը հաշմանդամություն ունեցող անձանց հետ: Լսողական կամ խոսակցական խնդիրներ ունեցող անձանց տրամադրվում է սուրդոթարգմանիչ, իսկ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար դատավարական փաստաթղթերի և դատական ակտերի հասանելիությունն ապահովվում է օգնականի միջոցով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով կատարված ուսումնասիրության արդյունքները՝ ներկայացնենք առանցքային բացահայտումները:

- Հաշմանդամություն ունեցող կանայք տանը կամ ընտանիքում առավել հաճախ ենթարկվում են սոցիալ-հոգեբանական բռնության: Թեև, ի տարբերություն ֆիզիկական բռնության կամ տնտեսական բռնության որոշ դրսևորումների, սոցիալ-հոգեբանական բռնության դրսևորումները քրեորեն պատժելի չեն, այնուամենայնիվ, ուսումնասիրությունը փաստում է, որ դրանք բացասական են ազդում հաշմանդամություն ունեցող անձանց մոտիվացիայի, սոցիալականացման, հասարակությանը լիարժեք ներառման ինքնաիրացման հեռանկարի վրա:
- Կիրառվող սոցիալ-հոգեբանական բռնությունը ունի ինչպես բացասական, այնպես էլ դրական, հոգատարության համատեքստ: Բացասական համատեքստը դրսևորվում է վիրավորանքների, մեկուսացման, արհամարհանքի ձևով, իսկ դրական համատեքստը՝ գերհոգատարության և գերխնամքի: 2 պարագայում էլ ուսումնասիրության մասնակիցները նշում էին, որ դա խանգարում է իրենց լիարժեք ինքնաիրացմանը և ամբողջ ներուժով ապրելու ձգտմանը:
- Ֆոկուս-խմբային քննարկումների միջոցով դուրս բերվեցին հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ բռնության կիրառման հիմնական պատճառները: Դրանք են՝
  - հաշմանդամություն ունեցող անձանց ներուժի թերագնահատումը ֆիզիկական, մտավոր, կամ հոգեկան զարգացման խնդիրների պատճառով,
  - հաշմանդամություն ունեցող անձի մեկուսացումը արտաքին աշխարհից, հասարակության պիտակավորումից և կարծիքից վախենալու պատճառով,
  - գերհոգատարությունը հաշմանդամություն ունեցող անձի հանդեպ,
  - ֆինանսական/սոցիալական դժվարությունները ընտանիքում
- Հաշմանդամություն ունեցող կանանց հանդեպ տանը կամ ընտանիքում բռնություն գործադրող անձը հիմնականում արական սեռի ներկայացուցիչ է, ընդ որում, եղբայրը ավելի հաճախ, քան հայրը կամ ամուսինը: Բռնության կիրառման հաճախականությամբ հաջորդը մայրն է: Ուսումնասիրության մասնակիցները նշում են, որ հաշմանդամություն ունեցող անձի խնամքով հիմնականում զբաղվում է մայրը, ուստի առավել հաճախ բռնության է ենթարկում հենց մայրը:
- Բռնության ենթարկվելու պարագայում վարքի ռազմավարությունները կտրուկ տարբերվում են: Առկա են ինչպես ոչինչ չանելու, այնպես էլ սեփական ուժերով պայքարելու մոտեցումներ: Ֆոկուս-խմբային քննարկումների ժամանակ նկատված պայքարի ոգին թեև ոգևորող է, սակայն այնուամենայնիվ քննարկումներին մասնակցել են հիմնականում ակտիվ, հասարակական կազմակերպություններին անդամակցող և իրազեկ կանայք, սակայն հասարակությանը որևէ կերպ չինտեգրված, մեկուսացած կանանց մոտեցումները ենթադրաբար տարբերվում են և նրանք կազմում են բռնության ենթարկվելու ռիսկի առավել մեծ խումբ:
- Համադրելով հարցաթերթիկային հարցման տվյալները և ֆոկուս-խմբային քննարկումների արդյունքները, կարող ենք փաստել, որ հասարակական կազմակերպությունները առավել մեծ վստահությունն են վայելում բռնության ենթարկվելու դեպքում դիմելու տեսանկյունից, այնուհետև նշվում է ոստիկանությունը և սոցիալական հարցերի նախարարությունը: Մեծ է վստահությունը նաև ոչ ֆորմալ կառույցների և անձանց հանդեպ՝ հարազատներ, ընկերներ, հեղինակություն ունեցող անձ և այլն:
- Համաձայն մեր հետազոտության, բռնության հանդեպ առավել խոցելի են՝
  - 50ից բարձր տարիքային խմբում գտնվող կանայք
  - Վարձատրվող աշխատանք չկատարող (եկամուտ չունեցող) կանայք

- Մտավոր զարգացման խնդիրներ և մանկական ուղեղային կաթված ունեցող կանայք
- Հաշմանդամության երկրորդ խմբում գտնվող կանայք
- Բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոններ առկա են երևանում, Ծիրակում, Սյունիքում և Լոռիում: Մտահոգիչ փաստ է, որ մյուս մարզերում չկան նման կենտրոններ: Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն ցուցաբերելու փորձ ունեն միայն «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոնը» և Երևանի «Կանանց աջակցման կենտրոնը», որը իր մասնագիտական թիմով, և փորձով լավագույնն էր դիտարկված կենտրոնների շրջանում: Մյուս հաստատությունները հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության փորձի պակասի կամ բացակայության պատճառով, դժվարանում էին նշել իրենց կարիքները, հիմնականում նշելով, որ ունեն ցանկացած վերապատրաստման կարիք:
- Առավել ցածր ներառականությունը և մատչելիությունը տեսողական, ֆիզիկական և լսողական խնդիրներ ունեցող անձանց համար է: Սա կապված է մասնագետների պակասի կամ բացակայության, անհրաժեշտ նյութերի և կահավորանքի բացակայության հետ:
- Հաշմանդամություն ունեցող անձինք ավելի խոցելի են ընտանիքում բռնության տեսանկյունից՝ պայմանավորված իրենց կարգավիճակով: Մինչդեռ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ուղարկված հարցումների համաձայն՝ գրեթե որևէ մարմին առանձին չի հաշվառում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ իրականացված բռնությունը, իսկ կառավարության որոշման նախագիծը, հետագայում նաև որոշումը (եթե նախագիծը չփոփոխվի) բացառում է ընտանիքում տեղի ունեցած բռնության դեպքերը գրանցելիս բռնությունից տուժած անձի հաշմանդամության վերաբերյալ նշում կատարելը: Միևնույն ժամանակ համեմատելով հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ սույն հետազոտությամբ արձանագրված դեպքերի և հարցումների արդյունքնում ստացված դեպքերի քանակը՝ ակնհայտ է, որ պատկան մարմինների կողմից արձանագրված դեպքերի թիվը չի համապատասխանում իրականությանը, հետևաբար հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ ընտանիքում բռնությունը ստվերային բնույթ է կրում և մնում է չբացահայտված: Այսպիսի մոտեցումը ամրապնդում և խորացնում է հասարակությունում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքը, նրանց՝ կյանքի շատ ոլորտներից բացառելը, առավել անտեսանելի է դարձնում հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հանդիպող խոչընդոտները: Այսպիսի պայմաններում խտրականության վերացման նկատառումով պետությունը պարտավոր է ձեռնարկել կառուցողական գործողություններ՝ ընտանիքում բռնության դեպքերի հաշվառման ժամանակ պարտադիր դարձնելով բռնությունից տուժած անձի հաշմանդամության մասին նշումը /դրա առկայության դեպքում/, ինչը ոչ միայն կբարձրացնի նրանց խնդիրների տեսանելիությունը, այլ նաև կհանգեցնի հանրության իրազեկվածության ավելացմանը՝ ի վերջո բացառելով խտրականությունը:
- Հաշմանդամություն ունեցող անձանց որոշ խմբերի հետ շփման համար անհրաժեշտ են հատուկ հմտություններ, որոնք, փաստացի, ձեռք չեն բերվում վերապատրաստման դասընթացների ընթացքում: Պետական մարմինները նշում են կոնկրետ խմբերի հետ հաղորդակցման հմտություններ ձեռք բերելու ուղղությամբ կազմակերպված դասընթացների մասին, սակայն դրանք համալիր չեն և չեն ներառում հաշմանդամություն ունեցող անձանց բոլոր խմբերը: Սա կարող է հանգեցնել հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ ընտանիքում բռնության դեպքերի ոչ պատշաճ քննության, ինչպես նաև բռնությունից տուժած անձի վիճակի վատթարացման՝ հաղորդկացության բացակայության պատճառով: Պետական մարմիններից ստացված պատասխաններում օգտագործված էին նաև այնպիսի արտահայտություններ, որոնք չեն կիրառվում հաշմանդամություն ունեցող անձանց նկարագրելիս, ինչը նույնպես խոսում է տեղեկատվության պակասի մասին: Պետք է նաև նշել, որ ոլորտում գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցները, առանց համապատասխան դասընթացները անցնելու, հնարավոր է՝ չկարողանան նույնացնել հաշմանդամություն

ունեցող անձին, ինչը նույնպես կհանգեցնի գործով ոչ պատշաճ քննության իրականացմանը:

- Պետական մարմինների թե՛ շենքային պայմանները, թե՛ տեղեկատվության աղբյուրները, թե՛ թեժ գծերը մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց բոլոր խմբերի համար, օրինակ՝ ինտերնետային կայքերը, բուկլետները մատչելի չեն տեսողական խնդիրներ ունեցող անձանց, մտավոր զարգացման խնդիրներ ունեցող անձանց համար, թեքահարթակների բացակայությունը խոչընդոտներ է առաջացնում տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար, թեժ գծերը հարմարեցված չեն լսողական և խոսքի խնդիրներ ունեցող անձանց համար և այլն:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ելնելով վերոգրյալից՝ ուսումնասիրված ոլորտի բարելավման, հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ ընտանիքում բռնության բացառման կամ որակյալ և մատչելի աջակցման ծառայություններ մատուցելու համար ներկայացնում ենք հետևյալ առաջարկները:

Առաջարկություններ պետական մարմիններին

- ՀՀ օրենսդրության մեջ կատարել համապատասխան փոփոխություններ, մշակել նոր կարգավորումներ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ ընտանիքում բռնության դեպքերի առավել արդյունավետ բացահայտման և կանխման, բռնության ենթարկվելուց հետո օգնություն ստանալու առավել մատչելի և հարմարեցված միջոցների ներդրման նպատակով,
  - լայնացնել Օրենքի 3-րդ հոդվածում նախատեսված ընտանիքում հանդիպող բռնության տեսակների շրջանակը և նախատեսել ոչ սպառիչ ցանկ: Հարկ է նկատել, որ ձևակերպումները մեծամասամբ նախատեսում են բռնության տեսակի սպառիչ ցանկ՝ թույլ չտալով այլ գործողությունները ևս որակել որպես բռնություն: Կարծում ենք՝ սա կարող է դժվարություններ առաջացնել՝ բռնության որոշ տեսակների արձանագրման տեսանկյունից: Այսպես, օրինակ՝ պարզ չէ, թե բռնության որ տեսակի մեջ կմտնի անձի անձնական կյանքի վերաբերյալ որոշումների վերահսկումը (զուգընկեր ունենալ, ամուսնանալ, երեխա ունենալ և այլն), կամ հատուկ կարիքների անտեսումը, որը մի դեպքում կարող է դիտվել որպես հոգեբանական բռնություն, մյուս դեպքում՝ որպես անտեսում, անգամ նույնիսկ ֆիզիկական բռնություն, երբ տեղաշարժման դժվարություններ ունեցող անձին զրկեն տեղաշարժման համար անհրաժեշտ հարմարություններից,
  - ընտանիքում բռնության դեպքերը հաշվառելու կարգը սահմանելիս դեպքի հաշվառման ձևաթղթում առանձնացնել նաև հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ իրականացված բռնությունը, արձանագրել հաշմանդամության տեսակը. սույն կարգավորումը չի կարող դիտարկվել որպես խտրական, այն ժամանակավոր կառուցողական գործողություն է՝ նպաստելու համար ոլորտում առկա խնդիրների լուծմանը,
  - ապաստարանների և սոցիալական աջակցության կենտրոնների ֆինանսավորումը նախատեսել պետական միջոցների հաշվին, դրանց տրամադրել կայուն և երկարաժամկետ ֆինանսավորում, որը կուղղվի նաև այդ կառույցների շինությունները հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր խմբերի համար առավել մատչելի դարձնելուն:
- Ոլորտում գործունեություն ծավալող մարմինների, աջակցության կենտրոնների, ապաստարանների թեժ գծերը, շենքային պայմանները հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր խմբերի համար դարձնել լիարժեք մատչելի և հասանելի՝ առաջնորդվելով միջազգային պայմանագրերով ՀՀ ստանձնած պարտավորություններով և միջազգային լավագույն փորձով: Մատչելիությունը, մասնավորապես՝ ներառում է ննջասենյակների, սանհանգույցի և մյուս ընդհանուր սրահների մատչելիություն տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար, տեսողական և ձայնային ազդանշանների, ժեստերի լեզվի թարգմանչի առկայություն լսողական խնդիրներով անձանց համար:
- Հաշմանդամություն ունեցող անձինք, լինելով խոցելի խումբ, ավելի զգայուն են բռնության այնպիսի տեսակների նկատմամբ, ինչպիսիք են՝ հեգեբանական կամ սոցիալ-հոգեբանական բռնության դրսևորումները: Ուստի, կարիք կա օրենքում հոգեբանական բռնության տեսակի ներքո առանձնացնել նաև սոցիալական բռնության ենթատիպ, որը կսահմանի անձի սոցիալականացման և սոցիալական կապիտալի ձևավորմանը խոչընդոտող վարքը:

➢ Քայլեր ձեռնարկել իրավապահ մարմինների նկատմամբ վստահությունը բարձրացնելու ուղղությամբ:

➢ Ընտանեկան բռնության ոլորտում լիազորություններ ունեցող պետական մարմինների, մասնավորապես՝ ՀՀ ոստիկանության վերապատրաստման դասընթացներում ընդգրկել խտրականության, հասարակության տարբեր խմբերի նկատմամբ տարբերակված մոտեցման հիմքով ընտանիքում բռնության կիրառման վերաբերյալ դասընթացներ՝ ապահովելու համար նրանց կոմպետենտությունը:

➢ Բարձրացնել հանրության իրավագիտակցությունը և իրազեկվածության ընդհանուր մակարդակը, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր խմբերի, ընտանեկան բռնության օրենսդրության վերաբերյալ:

➢ Ընտանեկան բռնությանը վերաբերող քննարկումները և հանրային իրազեկման միջոցառումները կազմակերպել հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր խմբերի համար մատչելի վայրերում և պայմաններով՝ ներգրավելով հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին:

➢ Համագործակցել մարդու իրավունքների պաշտպանության, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների հետ՝ իրականացվող քայլերն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով, մասնավորապես՝ մշակել ուղեցույցներ և տեղեկատվական նյութեր, կազմակերպել վերապատրաստումներ և դասընթացներ ոլորտում գործունեություն իրականացնող մարմինների համապատասխան աշխատակիցների, ապաստարանների և աջակցության կենտրոնների աշխատակազմի համար հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր խմբերի հետ ճիշտ հաղորդակցման և որակյալ սպասարկման վերաբերյալ:

➢ Ապաստարանների ֆինանսավորման պայմանագրերում ծրագրի շրջանակներում նախատեսվող ծառայությունների և ռեսուրսների մեջ նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց համար խելամիտ հարմարեցումների ապահովմանը՝ ներառյալ մատչելի կահույքը, ժեստերի լեզվի թարգմանչի ծառայությունները և անձնական օգնականի տրամադրումը:

➢ Մշտադիտարկել հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքները, և հատուկ մշակված մեթոդաբանությամբ կատարել հաշմանդամություն ունեցող անձի բռնության տեսանկյունից խոցելիության չափում: Առավել խոցելի անձանց հաշվառելու բռնությունը կանխարգելման արագ արձագանքմանը նպաստելու համար:

Առաջարկություններ ապաստարաններին և աջակցության կենտրոններին

➢ Հաստատությունը ներկայացնող գովազդները, բրոշյուրները և տեղեկատվական այլ նյութերը տրամադրել հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր խմբերի համար մատչելի տարբերակներով՝ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար բրայլյան գրերով, ձայնային նկարագրողական տարբերակով, մտավոր խնդիրներ ունեցող անձանց համար հեշտ ընթեցվող տարբերակով, տեսանյութերը՝ ժեստերի լեզվի թարգամանության և ենթագրերի ուղեկցությամբ:

➢ Աշխատակիցներին խրախուսել մասնակցելու ընտանիքում բռնության, հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր խմբերի առանձնահատկությունների, նրանց մատչելիության կարիքների, հաղորդակցման էթիկայի, որակյալ ծառայությունների մատուցման և սպասարկման վերաբերյալ դաընթացներին:

➢ Կազմակերպել դասընթացներ հաշմանդամություն ունեցող անձնանց իրավունքների պաշտպանության ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ոլորտում գործունեություն ծավալող պետական մարմինների աշխատակիցների համար՝ բարձրացնելու համար վերջիններիս իրազեկությունը բռնության տեսակների, բռնության կանխարգելման և բռնությունից տուժած անձանց

համար նախատեսված ծառայությունների վերաբերյալ, որպեսզի վերջիններս ուղղորդեն իրենց շահառուներին օգտվել այդ ծառայություններից:

- Վարել ընտանիքում բռնության դեպքերի վիճակագրություն՝ բռնության դեպքի արձանագրման ձևաթղթում ներառելով տվյալներ հաշմանդամություն ունեցող տարբեր խմբերի անձանց վերաբերյլ, նշելով հաշմանդամության տեսակը:

Առաջարկություններ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում գործող հասարակական կազմակերպություններին

- Համագործակցել Օրենքով ընտանիքում բռնության ոլորտում գործունեություն իրականացնող մարմինների հետ, անհրաժեշտության դեպքում պետական մարմիններին հայտնել ընտանիքում բռնության դեպքի վերաբերյալ,
- Մշակել մատչելիության և հաշմանդամություն ունեցող տարբեր խմբերի անձանց հետ հաղորդակցվելու վերաբերյալ մեթոդական նյութեր և տրամադրել ապաստարաններին, աջակցության կենտրոններին, պետական մարմիններին:
- Ընտանեկան բռնության ոլորտում լիազորություններ ունեցող պետական մարմինների, ապաստարանների, աջակցության կենտրոնների համապատասխան աշխատակիցների համար կազմակերպել դասընթացներ՝ բարձրացնելու համար վերջիններիս իրազեկությունը հաշմանդամություն ունեցող տարբեր խմբերի անձանց յուրահատկությունների մասին և զարգացնելու նրանց՝ հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր խմբերի հետ հաղորդակցվելու և որակյալ ծառայություններ մատուցելու կարողությունները:
- Քայլեր ձեռնարկել հաշմանդամություն ունեցող անձանց համար ՀԿ-ների տեսանելիությունը և մատչելիությունը բարձրացնելու, իրենց նկատմամբ վստահությունը ամրապնդելու ուղղությամբ:
- Իրականացնել դասընթացներ, քննարկումներ հաշմանդամություն ունեցող անձանց, նրանց ընտանիքի անդամների շրջանում հաշմանդամության, ընտանիքում բռնության մասին տեղեկացվածության մակարդակը և իրավագիտակցությունը բարձրացնելու ուղղությամբ, մասնավորապես՝ կազմակերպության շահառուներին իրենց համար մատչելի եղանակով տեղեկացնել բռնության տեսակների, դրա դեպքում ձեռնարկվելիք քայլերի մասին:
- Կազմակերպության աշխատակիցներին խրախուսել մասնակցելու ընտանիքում բռնության վերաբերյալ դաընթացներին:
- Վարել վիճակագրություն հաշմանդամություն ունեցող տարբեր խմբերի անձանց նկատմամբ ընտանիքում բռնության վերաբերյալ՝ ներառելով հաշմանդամության տեսակը:

Առաջարկություններ զանգվածային լրատվության միջոցներին

- Պատրաստել և տարածել ընտանիքում բռնության, հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկատվական-կրթական նյութեր, հաղորդումներ:
- Ձերծ մնալ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրական վերաբերմունք արտահայտող նյութեր և հաղորդումներ հրապարակելուց: